

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների
միջազգային ստանդարտներին
համապատասխան՝
Համախմբված ֆինանսական
հաշվետվություններ
և Անկախ աուդիտորական
եզրակացություն**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	1
Շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվություն	2
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	4
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	5

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1	«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը	6
2	Պատրաստման հիմունքները	7
3	Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ	8
4	Առանցքային հաշվապահական դատողություններ և գնահատումներ	33
5	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	34
6	Առևտրային արժեթղթեր	35
7	Ածանցյալ ֆինանսական գործիքներ	35
8	Բանկերում տեղաբաշխված միջոցներ	36
9	Ներդրումային արժեթղթեր	37
10	Հաճախորդներին տրված վարկեր	40
11	Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	53
12	Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	57
13	Հարկում	59
14	Վարկային կորստի գծով ծախսերի հակադարձում	61
15	Այլ ակտիվներ	62
16	Բանկերում տեղաբաշխված միջոցներ	63
17	Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	63
18	Թողարկված պարտքային արժեթղթեր	63
19	Այլ փոխառություններ	64
20	Ստորադաս վարկեր	65
21	Այլ պարտավորություններ	65
22	Սեփական կապիտալ	66
23	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ	67
24	Պայմանական դեպքեր և պարտավորություններ	68
25	Չուտ տոկոսային եկամուտ	70
26	Միջնորդավճարների գծով եկամուտ, զուտ	71
27	Այլ եկամուտ	71
28	Այլ գործառնական ծախսեր	71
29	Այլ ընդհանուր վարչական ծախսեր	72
30	Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս	72
31	Ռիսկերի կառավարում	72
32	Իրական արժեքի չափումներ	90
33	Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն	95
34	Կապակցված կողմերի բացահայտումներ	96
35	Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում	97
36	Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների փոփոխություններ	98
37	Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում	99
38	Կապիտալի համարժեքություն	100
39	Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	101

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ խորհրդին և բաժնետերերին

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») և նրա դուստր ձեռնարկությունների (այսուհետև միասին՝ «խումբ») համախմբված ֆինանսական վիճակն առ 2022թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև խմբի՝ այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքներն ու համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Աուդիտի առարկան

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություններ՝ առ 2022թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, և
- համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիր») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ Վարքագրին համապատասխան:

«Փրայատոթերհաուս Գուպերս Արմենիա» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Գամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է իմքի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են իմքի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար


Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում,


- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե հմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել հմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել հմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- ձեռք ենք բերում բավարար աուդիտորական ապացույցներ հմբի կազմում գտնվող կազմակերպությունների կամ տնտեսական գործունեության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար: Մենք պատասխանատու ենք հմբի աուդիտի ուղղորդման, վերահսկողության և կատարման համար: Մենք հանդիսանում ենք միակ պատասխանատուն մեր արտահայտած աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Լևան Կանկավա

Պատասխանատու աուդիտոր



Նինո Կադաղիշվիլի
Տնօրեն

PricewaterhouseCoopers Armenia LLC

30 հունիսի 2023թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն



«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
31 դեկտեմբերի 2022թ

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ. (վերաներկա- յացված*)	1 հունվարի 2021թ. (վերաներկա- յացված*)
ԱՎՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	88,369,285	96,447,988	66,398,135
Առևտրային արժեթղթեր	6	-	433,697	319,353
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	7	363,284	38,625	250,207
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	8	50,806,230	19,619,083	57,171,584
Ներդրումային արժեթղթեր				
- Բանկի կողմից պահվող	9	17,622,138	23,994,829	17,405,067
- առուվաճառքի և հետգնման	9	6,019,389	-	-
պայմանագրերով գրավադրված				
Հաճախորդներին տրված վարկեր	10	406,318,797	340,528,365	302,202,232
Ֆինանսական վարձակալության գծով				
ստացվելիք գումարներ	11	53,423,221	31,233,067	25,017,394
Ներդրումներ ասոցիացված				
կազմակերպությունում	35	1,362,224	1,218,677	984,442
Հիմնական միջոցներ, ոչ նյութական				
ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով	12	28,948,668	23,729,559	21,211,192
ակտիվներ				
Այլ ակտիվներ	15	16,114,880	10,727,098	5,318,983
Հետաձգված հարկային ակտիվներ	13	-	91,722	167,436
Ընդամենը ակտիվներ		669,348,116	548,062,710	496,446,025
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ածանցյալ ֆինանսական				
պարտավորություններ		-	-	79,893
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	16	9,937,634	1,070,890	45,717
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և				
ավանդներ	17	423,912,324	336,550,246	296,742,238
Թողարկված պարտքային արժեթղթեր	18	6,206,060	5,068,908	8,439,060
Այլ փոխառություններ	19	84,323,152	92,331,761	101,043,374
Ընթացիկ հարկային պարտավորություններ		4,698,987	1,187,740	126,703
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	1,016,530	1,296,678	680,497
Այլ պարտավորություններ	21	18,427,939	13,016,499	10,618,279
Ստորադաս վարկեր	20	7,805,036	9,794,000	11,130,839
Ընդամենը պարտավորություններ		556,327,662	460,316,722	428,906,600
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ				
Բաժնետիրական կապիտալ	22	22,312,000	22,312,000	22,312,000
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների	23	32,738	26,038	-
պահուստ				
Հիմնական միջոցների վերագնահատման		5,934,032	3,012,381	2,056,843
պահուստ				
Ներդրումային արժեթղթերի		1,492,423	1,749,594	1,658,000
վերագնահատման պահուստ				
Զբաղիչ շահույթ		65,525,389	46,253,940	37,987,127
Ընդամենը մայր ընկերության		95,296,582	73,353,953	64,013,970
բաժնետերերին վերագրելի կապիտալ		17,723,872	14,392,035	3,525,455
Ընդամենը սեփական կապիտալ		113,020,454	87,745,988	67,539,425
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ				
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		669,348,116	548,062,710	496,446,025

*Տե՛ս ծանոթագրություն 3-ը վերաներկայացման վերաբերյալ մանրամասների համար:

Ստորագրվել և վավերացվել է Ընկերության Տնօրինության կողմից՝ 2023թ. հունիսի 30-ին:

Հարություն Պողոսյան
 Գլխավոր տնօրեն



Լիլա Թադեոսյան
 Գլխավոր հաշվապահ

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվություն
31 դեկտեմբերի 2022թ.

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2022թ.	2021թ. (վերաներկայացված*)
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ	25	51,906,555	45,084,579
Այլ տոկոսային հասույթ	25	5,852,766	3,524,713
Տոկոսային ծախս	25	(24,243,979)	(21,085,686)
Չուտ տոկոսային եկամուտ		33,515,342	27,523,606
Վարկային կորստի գծով ծախսերի հակադարձում	14	2,290,443	228,883
Չուտ տոկոսային եկամուտ վարկային կորստի գծով ծախսից հետո		35,805,785	27,752,489
Միջնորդավճարների գծով եկամուտ	26	9,703,458	6,294,559
Միջնորդավճարների գծով ծախս	26	(3,651,739)	(2,510,554)
Չուտ օգուտ (վնաս) շահույթի և վնասի միջոցով իրական արժեքով ֆինանսական գործիքներից		(115,359)	309,931
Չուտ օգուտ արտարժույթով գործարքներից		13,516,463	2,919,335
Չուտ վնաս արտարժույթի փոխարկումից		(197,117)	(634,753)
Անոցիացված կազմակերպությունների շահույթի մասնաբաժին	35	736,475	579,024
Այլ եկամուտ	27	1,447,000	883,620
Ոչ տոկոսային եկամուտ		21,439,181	7,841,162
Անձնակազմի գծով ծախսեր		(16,804,816)	(14,983,392)
Մաշվածություն և ամորտիզացիա	12	(2,609,599)	(2,497,486)
Այլ գործառնական ծախսեր	28	(2,446,395)	(2,011,119)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	29	(4,055,894)	(4,023,453)
Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս	30	(3,283,385)	(95,529)
Ոչ տոկոսային ծախսեր		(29,200,089)	(23,610,979)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		28,044,877	11,982,672
Շահութահարկի գծով ծախս	13	(5,747,221)	(2,758,290)
Հաշվետու տարվա շահույթ		22,297,656	9,224,382
Մեկ բաժնետոմսի գծով շահույթ			
Վերագրելի՝			
- Մայր ընկերության բաժնետերերին		18,619,452	8,358,567
- Չվերահսկող բաժնեմասին		3,678,204	865,815
Հաշվետու տարվա շահույթ		22,297,656	9,224,382

*Տե՛ս ծանոթագրություն 3-ը վերաներկայացման վերաբերյալ մանրամասների համար:

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն
31 դեկտեմբերի 2022թ.**

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2022թ.	2021թ. (վերաներկա- յացված*)
Հաշվետու տարվա շահույթ		22,297,656	9,224,382
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը ենթակա է վերադասակարգման հետագա ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի կազմում</i>			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով իրական արժեքի զուտ փոփոխություն		(476,694)	(226,739)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող վարկային կորուստների պահուստի փոփոխություններ		158,454	304,374
Շահութահարկ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի տարրերի գծով	13	57,283	(13,974)
Չուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը ենթակա է վերադասակարգման հետագա ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի կազմում		(260,957)	63,661
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը ենթակա չէ վերադասակարգման հետագա ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի կազմում</i>			
Շենքերի և փոխադրամիջոցների վերազնափառում	12	3,637,000	1,165,549
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների գծով վնասներ		(3,104)	(2,495)
Շահութահարկ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի տարրերի գծով	13	(355,301)	(118,515)
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք, որը ենթակա չէ վերադասակարգման հետագա ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի կազմում		3,278,595	1,044,539
<i>Հետագա ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի կազմում չվերադասակարգվող</i>			
Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասնաբաժին		(53,122)	20,686
Շահութահարկ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի տարրերի գծով	13	9,562	-
Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասնաբաժին		(43,560)	20,686
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց հարկի		2,974,078	1,128,886
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		25,271,734	10,353,268
<i>Վերագրելի՝</i>			
- Մայր ընկերության բաժնետերերին		21,380,016	9,328,097
- Չվերահսկող բաժնեմասին		3,891,718	1,025,171
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		25,271,734	10,353,268

*ՏԵՍ ծանոթագրություն 3-ը վերաներկայացման վերաբերյալ մանրամասների համար:

«ԱԿԲԱ Ֆերերացիա» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
31 դեկտեմբերի 2022թ.

Հազ. ՀՀ դրամ	Վերագրելի՝ մայր կազմակերպության սեփականատերերին							
	Բաժնետիրական կապիտալ	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատումից աճ (վերաներկայացված*)	ԻԱՄՀՖԱ միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ (վերաներկայացված*)	Զբաղիված շահույթ (վերաներկայացված*)	Ընդամենը	Զվերահսկող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. (վերաներկայացված*)	22,312,000	-	2,056,843	1,658,000	37,987,127	64,013,970	3,525,455	67,539,425
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք								
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	8,358,567	8,358,567	865,815	9,224,382
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	964,671	91,594	(86,735)	969,530	159,356	1,128,886
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	964,671	91,594	8,271,832	9,328,097	1,025,171	10,353,268
Հիմնական միջոցների օտարման արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցում չբաշխված շահույթին	-	-	(9,133)	-	9,133	-	-	-
Գործարքներ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում								
Դուստր ձեռնարկությունում բաժնեմասնակցության նվազում (Ծանոթագրություն 22)	-	-	-	-	(429,456)	(429,456)	7,929,456	7,500,000
Շահաբաժիններ չվերահսկող բաժնեմասի գծով (Ծանոթագրություն 22)	-	-	-	-	-	-	(125,000)	(125,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	(429,456)	(429,456)	7,804,456	7,375,000
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծանոթագրություն 23)	-	26,038	-	-	415,304	441,342	2,036,953	2,478,295
Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված*)	22,312,000	26,038	3,012,381	1,749,594	46,253,940	73,353,953	14,392,035	87,745,988
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք								
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	18,619,452	18,619,452	3,678,204	22,297,656
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	3,017,735	(257,171)	-	2,760,564	213,514	2,974,078
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	3,017,735	(257,171)	18,619,452	21,380,016	3,891,718	25,271,734
Հիմնական միջոցների օտարման արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցում չբաշխված շահույթին	-	-	(96,084)	-	96,084	-	-	-
Գործարքներ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում								
Դուստր ձեռնարկությունում բաժնեմասնակցության ավելացում	-	-	-	-	33,102	33,102	(123,887)	(90,785)
Շահաբաժիններ չվերահսկող բաժնեմասի գծով (Ծանոթագրություն 22)	-	-	-	-	-	-	(537,421)	(537,421)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	33,102	33,102	(661,308)	(628,206)
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծանոթագրություն 23)	-	6,700	-	-	522,811	529,511	101,427	630,938
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	22,312,000	32,738	5,934,032	1,492,423	65,525,389	95,296,582	17,723,872	113,020,454

*Տե՛ս ծանոթագրություն 3-ը վերաներկայացման վերաբերյալ մանրամասների համար:

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն – 31 դեկտեմբերի 2022թ.

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2022թ.	2021թ. (վերաներկայացված*)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսագումարներ (արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված)		49,011,418	44,792,819
Ստացված այլ տոկոսներ		6,102,070	3,524,713
Վճարված տոկոսներ		(23,471,489)	(20,736,704)
Ստացված միջնորդավճարներ		9,703,542	6,429,127
Վճարված միջնորդավճարներ		(3,651,890)	(2,510,553)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով ֆինանսական գործիքների գծով զուտ մուտք		196,839	772,393
Չուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից	27	13,516,463	2,919,335
Վճարված այլ գործառնական ծախսեր		(2,326,498)	(2,426,799)
Ստացված այլ եկամուտներ		234,183	573,836
Աշխատավարձեր և այլ վճարումներ աշխատողներին		(14,548,898)	(11,926,258)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր		(4,051,492)	(3,946,766)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները		30,714,248	17,465,143
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/ նվազում			
Առևտրային արժեթղթեր		428,072	(114,344)
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		(31,083)	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ		(32,847,258)	37,508,706
Հաճախորդներին տրված վարկեր		(83,168,876)	(38,283,739)
Ֆինանսական վարձակալության և հարակից ակտիվների գծով ստացվելիք զուտ մուտքեր		(22,270,275)	(12,598,205)
Այլ ակտիվներ		(4,683,157)	(389,545)
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում).			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		-	(79,831)
Բանկերում տեղաբաշխված միջոցներ		8,738,065	1,019,240
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		116,651,696	39,447,997
Այլ պարտավորություններ		2,723,820	1,381,367
Գործառնական գործունեությամբ ստացված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը		16,255,252	45,356,789
Վճարված շահութահարկ		(2,687,672)	(1,137,847)
Գործառնական գործունեությամբ ստացված զուտ դրամական միջոցներ		13,567,580	44,218,942
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(1,909,837)	(2,025,077)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,613,821)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր		53,404	103,225
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(6,195,291)	(11,458,482)
Ներդրումային արժեթղթերի վաճառք և մարում		2,944,680	3,824,060
Ստացված շահաբաժիններ		539,806	-
Դուստր ձեռնարկությունում բաժնեմասնակցության ավելացում		(90,785)	-
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		(6,271,844)	(9,556,274)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Դուստր ձեռնարկությունում բաժնեմասնակցության նվազում	22	-	7,500,000
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	36	2,191,500	3,461,498
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	36	(789,212)	(6,033,577)
Այլ փոխառություններից մուտքեր	36	34,288,004	33,778,000
Այլ փոխառությունների մարում	36	(37,932,197)	(43,034,045)
Չվերահսկող բաժնեմասի գծով վճարված շահաբաժիններ	22	(537,421)	(125,000)
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված ստացված զուտ դրամական միջոցներ		(2,779,326)	(4,453,124)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա			
Արժեզրկման գծով պահուստի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(12,664,004)	(84,277)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		(8,078,703)	30,049,853
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		96,447,988	66,398,135
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	5	88,369,285	96,447,988

*Տե՛ս ծանոթագրություն 3-ը վերաներկայացման վերաբերյալ մանրամասների համար:

6-101 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1 «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն («Ընկերություն») մայր կազմակերպությունն է Խմբում, որը բաղկացած է Ընկերությունից և իր դուստր կազմակերպություններից՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ից («Բանկ») (Բանկի դուստր կազմակերպությունների՝ «ԱԳԲԱ Լիզինգ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ-ի և «ԱԿԲԱ Տեխնոլաբ» ՍՊԸ-ի հետ միասին), «ԱԿԲԱ Թեքնոլոջիա» ՓԲԸ-ից և «ԱԿԲԱ Թրեյդ» ՓԲԸ-ից (միասին՝ «Խումբ»)։ Այն հիմնադրվել է 2017թ.-ի մայիսի 6-ին «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի նախկին բաժնետերեր հանդիսացող 10 գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորումների (ԳՓՄՄ) կողմից, որոնք ներկայումս հանդիսանում են «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ի բաժնետերերը։ ԳՓՄՄ -ները ՀՀ 10 մարզերում աշխատող հասարակական կազմակերպություններ են, և ստեղծվել են մարզերում գյուղատնտեսությունը զարգացնելու նպատակով։ 10 ԳՓՄՄ-ները միասին ունեն 73,949 անդամներ։ Ընկերությունը իր գործունեության տեսակով հանդիսանում է շահույթ հետապնդող կազմակերպություն։

Ընկերության հիմնական նպատակն է ՀՀ ողջ տարածքում նպաստել գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, գյուղական շրջաններում և համայնքներում բիզնես միջավայրի զարգացմանը և աշխուժացմանը։

Ընկերությունը նախաձեռնում է գյուղատնտեսական ոլորտում նորարարական մոտեցումների ներդրման, ստարտափ նախաձեռնությունների բացահայտման և իրագործման, աշխարհում կիրառվող առաջադեմ գյուղատնտեսական տեխնոլոգիաների ուսումնասիրության և Հայաստանի գյուղատնտեսության մեջ հնարավոր ներդրման ծրագրեր։

Բանկը ձևավորվել է 1995թ.-ին, որպես միացյալ սեփականությամբ կոոպերատիվ բանկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, և 2006թ.-ին վերակազմակերպվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն։ Բանկը գործունեություն է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԿԲ») կողմից տրված ընդհանուր բանկային լիցենզիայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ ավանդների ապահովագրության պետական համակարգի անդամ։

Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ և մատուցում է այլ բանկային ծառայություններ իր կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին։ Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևան քաղաքում, և այն ունի 63 մասնաճյուղեր (ներառյալ՝ գլխամասը) Երևանում և ՀՀ այլ մարզերում։ Բանկի գրանցման իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0002, Արամի փողոց 82-84։

«ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպությունը հիմնադրվել է 2003թ.-ի մարտի 30-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն։ Ընկերության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության գծով գործառնություններն են իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների հետ։ Ընկերությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա՝ տրված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից։ Ընկերությունը Խմբի դուստր ընկերությունն է և համախմբված է այս ֆինանսական հաշվետվություններում։ Բանկին է պատկանում «ԱԳԲԱ Լիզինգ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը։

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն հանդիսանում է «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի 83.80% բաժնետոմսերի սեփականատեր։

«ԱԿԲԱ Թեքնոլոջիա» ՓԲԸ-ն հիմնադրվել է 2021թ. սեպտեմբերի 7-ին «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ի (51%) և «Ունիվերսալ Թեքնոլոջիա» ՓԲԸ-ի (49%) կողմից։ Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ ծրագրային ապահովման մշակումը, համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում խորհրդատվական գործունեությունը, տվյալների մշակումը և այլն։

«ԱԿԲԱ Թրեյդ» ՓԲԸ-ն հիմնադրվել է 2022թ. մայիսի 23 -ին «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ի (100%) կողմից։ Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են ապրանքների միջնորդավորված վաճառքի կազմակերպումը առցանց շուկայի (marketplace) միջոցով Հայաստանում, ինչպես նաև Հայաստանյանից դուրս արտահանմամբ։

1. «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խմբի բաժնետերերն են.

№	Բաժնետիրոջ անվանումը	Կազմակերպության տեսակը	Վճարված բաժնետիրական կապիտալ	վճարված կապիտալի %
1	Արմավիրի գյուղատնտեսական կոոպերատիվ տարածքային միավորում	ՀԿ	4,441,000	19.9
2	Արարատի գյուղատնտեսական կոոպերատիվ մարզային միավորում	ՀԿ	3,878,000	17.4
3	Արագածոտնի գյուղատնտեսական կոոպերատիվ մարզային միավորում	ՀԿ	2,319,000	10.4
4	Լոռու գյուղատնտեսական կոոպերատիվ տարածքային միավորում	ՀԿ	2,081,000	9.3
5	Շիրակի գյուղատնտեսական կոոպերատիվ տարածքային միավորում	ՀԿ	2,080,000	9.3
6	Կոտայքի գյուղատնտեսական կոոպերատիվ մարզային միավորում	ՀԿ	1,759,000	7.9
7	Գեղարքունիքի գյուղատնտեսական կոոպերատիվ մարզային միավորում	ՀԿ	1,662,000	7.5
8	Տավուշի գյուղատնտեսական կոոպերատիվ մարզային միավորում	ՀԿ	1,499,000	6.7
9	Սյունիքի գյուղատնտեսական կոոպերատիվ տարածքային միավորում	ՀԿ	1,339,000	6.0
10	Վայոց ձորի գյուղատնտեսական կոոպերատիվ մարզային միավորում	ՀԿ	1,254,000	5.6
Ընդամենը			22,312,000	100.00

Խումբը չունի մեկ վերահսկող կողմ:

2 Պատրաստման հիմունքները

Ընդհանուր դրույթներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՀՀՄՍ») պահանջների համաձայն, սկզբնական արժեքի հիմունքով՝ փոփոխված իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչմամբ և տարածքների և սարքավորումների (հող, շենք և փոխադրամիջոցներ) , իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով («FVOCI») դասակարգված ֆինանսական գործիքների, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով («FVTPL») չափվող ֆինանսական գործիքների, ածանցյալ գործիքների և առևտրային նպատակով պահվող ակտիվների վերագնահատմամբ: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այդ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են այն բոլոր ժամանակաշրջանների համար, որոնք ներկայացված հաշվետվություններում, եթե այլ բան նշված չէ:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով (ՀՀ դրամ), բացառությամբ մեկ բաժնետոմսի գծով գումարների, և եթե այլ բան նշված չէ:

Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունը ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների և պարենային ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, գնաճը նույնպես իր ազդեցությունն է ունեցել գների վրա, որի արդյունքում վերլուծաբանները կանխատեսում են տնտեսական հետևանքներ համաշխարհային տնտեսության տարբեր ոլորտներում:

2 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև (շարունակություն)

Ռուս-ուկրաինական հակամարտության սրման և Ռուսաստանի Դաշնության դեմ կիրառված պատժամիջոցների պատճառով 2022թ. առաջին եռամսյակի վերջում կանխատեսվում էր Ռուսաստանի տնտեսության տարեկան 10% անկում (ՏՀԳ -ի մարտի 2022-ի կանխատեսմամբ): Զանի որ Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ-ի ամենամեծ առևտրային գործընկերն է և ՀՀ-ից ամենաշատ աշխատանքային միգրանտներ ընդունող երկիրը, անկախվում էր, որ Ռուսաստանի Դաշնության հոռետեսական տնտեսական զարգացումները բացասական ազդեցություն կունենան ՀՀ տնտեսության մի շարք ոլորտների, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունից ստացված տրանսֆերտների վրա: Ելնելով վերոգրյալից՝ անկախվում էր, որ ՀՀ տնտեսական աճը կդանդաղի:

ՀՀ ԿԲ 2022թ. մարտի կանխատեսումների և ՏՀԳ-ի ապրիլյան կանխատեսումների համաձայն՝ ՀՀ տնտեսական տարեկան աճը կանխատեսվում էր մոտ 1%: 2022թ. առաջին եռամսյակի վերջում իր Դեֆոլտի հավանականության կանխատեսումները և ԱՊԿ հաշվարկները պատրաստելիս հսումբը հաշվի է առել վերոնշյալ դիտարկումներն և անկախիքները: Ռուս-ուկրաինական հակամարտության առաջին իսկ օրերից ԱԿԲԱ Բանկը ճշգրտել է իր սահմանաչափերը ռուսական բանկերի համար (բանկերի համար առավելագույն սահմանաչափերը կրճատվել են):

Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է առկա համաշխարհային ցնցումներին և 2022թ. գրանցել է տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ՝ հիմնականում զբոսաշրջության, մի շարք ընկերությունների Հայաստան տեղափոխման և տրանսֆերտների զգալի աճի շնորհիվ: Նշված բոլոր գործոնները հանգեցրել են ՀՆԱ-ի 12,6% աճի 2022թ-ին, ինչը զգալիորեն ավելի բարձր է, քան անկախվում էր տարեսկզբին: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կատարողական արդյունքների դիտարկման համաձայն՝ տնտեսական վերականգնումը կշարունակվի: Կառավարությունը նախատեսում է 7% աճ 2023թ.: Կառավարության 2021-2026թթ. տնտեսական ծրագիրը նախատեսում է զարգացնել արտահանմանն ուղղված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների ջանքերի միջոցով:

Standard & Poor's-ի կողմից Հայաստանին տրված վարկային վարկանիշը B+ է՝ 2022թ. նոյեմբերի 24-ի կայուն կանխատեսմամբ: Fitch-ի վարկային վարկանիշը Հայաստանի համար կազմում է B+ և թարմացվել է 2023թ. փետրվարի 10-ին՝ դրական կանխատեսմամբ:

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են համբի գործառնությունների և ֆինանսական վիճակի վրա հայկական բիզնես միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Ապագա բիզնես միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Գնահատումներում անորոշությունները

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հասանելի տեղեկատվության հիման վրա, հսումբը ապագայում սպասվող դրամական հոսքերի գնահատումները արտացոլել է անկախվող վարկային կորուստների (Ծանոթագրություն 10, 11) ֆինանսական գործիքների իրական արժեքների, հիմնական միջոցների իրական արժեքների վերագնահատումներում (Ծանոթագրություն 32):

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

հսումբը առաջին անգամ կիրառել է ստանդարտների որոշակի փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: հսումբը չի իրականացրել թողարկված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած որևէ ստանդարտի, մեկնաբանության կամ փոփոխության վաղաժամ կիրառում:

Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից.

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

«Նախքան ակտիվի նպատակային օգտագործումը ստացված հասույթ, անբարենպաստ պայմանագրեր. պայմանագրի կատարման արժեքը», «Հղում հայեցակարգային հիմունքներին». ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 37-ի և ՀՀՄՍ 3-ի փոփոխություններ՝ սահմանափակ կիրառության շրջանակով, և ՀՀՄՍ 1-ին, ՀՀՄՍ 9-ին, ՀՀՄՍ 16-ին և ՀՀՄՍ 41-ին վերաբերող 2018-2020 թթ. ՀՀՄՍ-ների տարեկան բարելավումներ (թողարկված են 2020թ. մայիսի 14-ին և ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

- ՀՀՄՍ 16-ի փոփոխությամբ կազմակերպություններին արգելվում է հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, որն արտադրվել է կազմակերպության կողմից ակտիվն իր նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վիճակի բերելու ընթացքում: Նման պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, դրա արտադրության ծախսերի հետ միասին, այժմ ենթակա է ճանաչման շահույթում կամ վնասում: Նման պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքի չափման համար Կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 2-ը: Սկզբնական արժեքը չի ներառի նման կերպ փորձարկվող ակտիվի մաշվածությունը, քանի որ այն դեռ պատրաստ չէ իր նպատակային օգտագործման համար: ՀՀՄՍ 16-ի փոփոխությունը նաև հստակեցնում է, որ կազմակերպությունը «ստուգում է ակտիվի պատշաճ գործունակությունը»՝ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական բնութագրերը գնահատելու միջոցով: Այս չափման համար էական չեն այդպիսի ակտիվի ֆինանսական ցուցանիշները: Հետևաբար, ակտիվը կարող է շահագործվել ղեկավարության մտադրությունների համաձայն, և մաշվածությունը կարող է հաշվարկվել մինչև ղեկավարության կողմից ակնկալվող գործառնական շահագործման համար անհրաժեշտ վիճակի հասնելը:
- ՀՀՄՍ 37-ի փոփոխությունը հստակեցնում է «պայմանագրի կատարման գծով ծախսեր» հասկացությունը: Փոփոխությամբ պարզաբանվում է, որ պայմանագրի կատարման գծով ուղղակի ծախսերը ներառում են այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի բաշխումը: Փոփոխությամբ նաև հստակեցվում է, որ նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին պահուստի ձևավորումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ պայմանագրի կատարման ընթացքում օգտագործված ակտիվների գծով, այլ ոչ թե պայմանագրի կատարման համար հատկացված ակտիվների գծով:
- ՀՀՄՍ 3-ում կատարվել է լրացում՝ ներառելով հղում ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքներին, ինչը թույլ է տալիս սահմանել ակտիվի կամ պարտավորության հասկացությունը ձեռնարկատիրական գործունեության միավորման համատեքստում: Մինչ այս փոփոխության ընդունումը, ՀՀՄՍ 3-ը հղում էր կատարում 2001թ. ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային հիմունքներին: Բացի այդ, ՀՀՄՍ 3-ում ավելացվել է նոր բացառություն պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար: Այս բացառությամբ նախատեսվում է, որ ՀՀՄՍ 3-ը կիրառող կազմակերպությունը, որոշակի տիպի պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար պետք է հղում կատարի ՀՀՄՍ 37-ին կամ ՀՀՄՍ-ն (IFRIC)21-ին, , այլ ոչ թե 2018թ. Հայեցակարգային հիմունքին: Առանց այս նոր բացառության, կազմակերպությունը ստիպված կլիներ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ճանաչել որոշ պարտավորություններ, որոնք չէր ճանաչի համաձայն ՀՀՄՍ 37:
Հետևաբար, ձեռքբերումից անմիջապես հետո կազմակերպությունը ստիպված կլիներ ապաճանաչել այդպիսի պարտավորությունները և ճանաչել տնտեսական օգուտներ չմարմավորող եկամուտ: Նաև պարզաբանվել է, որ ձեռք բերող կազմակերպությունը պարտավոր չէ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչել պայմանական ակտիվներ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 37-ում:
- ՀՀՄՍ 9-ի փոփոխությունն անդրադառնում է այն հարցերին, թե որ տեսակի վճարումներն են ենթակա ներառման «10% փորձարկման» կազմում՝ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման նպատակով: Ծախսերը կամ վճարումները կարող են կատարված լինել հոգուտ երրորդ անձանց կամ վարկատուի: Այս փոփոխության համաձայն, երրորդ անձանց օգտին կատարված ծախսերը կամ վճարումները չեն ներառվի «10% փորձարկման» կազմում:
- Փոփոխություններ են կատարվել ՀՀՄՍ 16-ի 13-րդ նկարագրական օրինակում. հանվել է վարձատուի կողմից վարձակալվող գույքի բարելավումներին վերագրվող վճարումների օրինակը: Այս փոփոխությունը կատարվել է՝ վարձակալության խթանների դասակարգման հնարավոր անորոշությունից խուսափելու համար:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

- ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս օգտվել բացառությունից այն դեպքում, եթե դուստր ձեռնարկությունը սկսում է ՖՀՄՍ-ի կիրառումն ավելի ուշ ամսաթվով, քան իր մայր կազմակերպությունը: Դուստր ձեռնարկությունը կարող է չափել իր ակտիվներն ու պարտավորությունները այն հաշվեկշռային արժեքով, որով դրանք պետք է ներառվեն մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցնելու ամսաթվից, եթե տեղի ունեցած չլիներ ճշգրտումներ համախմբման և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքների արտացոլման նպատակներով, որի ներքո մայր կազմակերպությունը ձեռք է բերել նշված դուստր ձեռնարկությունը: ՖՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է տալիս սույն ՖՀՄՍ 1-ի բացառությունը կիրառած կազմակերպություններին նաև արտարժույթի փոխարկումից կուտակային տարբերությունները չափելիս օգտագործել մայր կազմակերպության կողմից ներկայացված թվային մեծությունները՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցման ամսաթվից: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությամբ վերոնշյալ բացառությունը տարածվում է արտարժույթի փոխարկումից առաջացած կուտակային տարբերությունների վրա, և նպատակ ունի նվազեցնել ՖՀՄՍ-ն առաջին անգամ կիրառող կազմակերպության ծախսերը: Այս փոփոխությունը կկիրառվի նաև դուստր և համատեղ ձեռնարկությունների վրա, որոնք կօգտվեն ՖՀՄՍ 1-ով սահմանված նույն բացառությունից:
- Վերացվել է պահանջը, ըստ որի կազմակերպությունները ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքը չափելիս պարտավոր էին հարկային հաշվառման տեսանկյունից հաշվի չառնել դրամական հոսքերը: Այս փոփոխության նպատակն է՝ ապահովել համապատասխանություն հարկումից հետո զեղչված դրամական հոսքերի ստանդարտի պահանջին:

Փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն չի ունեցել խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Համախմբման հիմունքներ

Դուստր ընկերությունները, որոնց գործունեության նկատմամբ խումբը վերահսկողություն է իրականացնում, համախմբվում են: Վերահսկողություն առկա է այն դեպքում, երբ խումբը կրում է փոփոխական հատույցների գծով իրավունքները կամ ռիսկերը ներդրման օբյեկտի հետ իր հարաբերությունների արդյունքում, և կարող է ազդել այդ եկամուտների վրա՝ ներդրման օբյեկտի նկատմամբ ունեցած իր լիազորությունների միջոցով: Մասնավորապես, խումբը վերահսկում է ներդրումը, միայն և միայն այն դեպքում, երբ բավարարվում են հետևյալ պայմանները՝

- Խումբն ունի իրավասություն ներդրման օբյեկտի նկատմամբ (այսինքն՝ գոյություն ունեցող իրավունքներ, որոնք ապահովում են ներդրման օբյեկտի նշանակալի գործունեությունը կառավարելու հնարավորություն),
- Խումբն ունի իրավունք ներդրումներից ստացվող փոփոխական հատույցների նկատմամբ և ենթարկվում է այդ հատույցների փոփոխությունների հետ կապված ռիսկին,
- Խումբն ունի հնարավորություն օգտագործելու իր իրավասությունները ներդրման օբյեկտի նկատմամբ՝ ներդրումներից փոփոխական հատույցների վրա ազդելու նպատակով:

Ընդհանուր առմամբ, ենթադրվում է, որ վերահսկողությունը պայմանավորված է ձայնի իրավունքի մեծամասնությամբ: Սույն ենթադրության հաստատման, ինչպես նաև խմբի մոտ մեծամասնությունից ավելի քիչ քվեարկման կամ ներդրման օբյեկտի նկատմամբ մեծամասնությունից ավելի քիչ նմանատիպ իրավունքների առկայության դեպքում, խումբը հաշվի է առնում է բոլոր փաստերը և հանգամանքները տվյալ ներդրման օբյեկտի նկատմամբ իրավասության առկայությունը գնահատելիս, ներառյալ՝

- Պայմանագրային պայմանավորվածություն(ներ)ը ներդրումային օբյեկտում այլ ձայնի իրավունք ունեցողների հետ.
- Այլ պայմանագրային պայմանավորվածություններից բխող իրավունքներ.
- Խմբի ձայնի իրավունքը և հնարավոր ձայնի իրավունքը:

Դուստր ձեռնարկությունները համախմբվում են այն պահից, երբ վերահսկողությունը փոխանցվում է խմբին, և համախմբումը դադարում է այն պահից, երբ խումբը կորցնում է նշված վերահսկողությունը: Ներխմբային բոլոր գործարքները, ինչպես նաև այդ գործարքների արդյունքում առաջացած մնացորդներն ու չիրացված օգուտները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեքի մասին: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերությունների հաշվապահական հաշվառման

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

քաղաքականությունները իմբի հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխանեցնելու նպատակով:

Դուստր կազմակերպության սեփականության բաժնեմասի փոփոխությունը, առանց վերահսկողության փոփոխության, հաշվառվում է որպես բաժնային գործարք: Վնասները վերագրվում են չվերահսկող բաժնեմասերին, նույնիսկ եթե դա հանգեցնում է բացասական մնացորդի:

Եթե խումբը կորցնում է դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողությունը, այն ապաճանաչում է դուստր կազմակերպության ակտիվները (ներառյալ՝ գույքիլը) և պարտավորությունները, ցանկացած չվերահսկող բաժնեմասի հաշվեկշռային արժեք, սեփական կապիտալում արտացոլվող փոխարկման կուտակված տարբերությունները, ճանաչում է ստացված փոխհատուցման իրական արժեքը, մնացած ներդրման իրական արժեքը, գործարքի արդյունքում առաջացած ավել կամ պակաս գումարը շահույթում կամ վնասում, վերադասակարգում է նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերի մայր կազմակերպության բաժինը շահույթում կամ վնասում կամ չբաշխված շահույթում:

Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում

Ասոցիացված են համարվում այն կազմակերպությունները, որոնցում խումբը ունի 20%-ից 50% քվեարկող բաժնեմաս կամ խումբն ունի էական ազդեցության այլ հնարավորություններ, որոնք նա չի վերահսկում կամ համատեղ վերահսկում: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով՝ ներառյալ գույքիլը: Հաշվեկշռային արժեքի հետագա փոփոխությունները արտացոլում են միավորմանը հաջորդող իմբի՝ ասոցիացված կազմակերպության գուտ ակտիվների բաժնեմասի փոփոխությունները: Իմբի՝ ասոցիացված կազմակերպության շահույթի կամ վնասի բաժնեմասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստներում փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այնուամենայնիվ, երբ իմբի՝ ասոցիացված կազմակերպություններում վնասների բաժինը գերազանցում է իր բաժնեմասը ասոցիացված կազմակերպությունում, խումբը չի ճանաչում հետագա վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ խումբը պարտավոր է հետագա վճարումներ կատարել ասոցիացված կազմակերպությանը կամ նրա անունից:

Իմբի և իր ասոցիացված կազմակերպության միջև գործարքներից չիրացված օգուտները բացառվում են միևնույն իմբի՝ ասոցիացված կազմակերպությունում բաժնեմասը: չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեքիկման մասին:

Իրական արժեքի չափում

Խումբը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքները բացահայտված են Ծանոթագրություն 32-ում:

Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում:

Իրական արժեքի չափումը հիմնված է այն ենթադրության վրա, որ ակտիվը վաճառելու կամ պարտավորությունը փոխանցելու գործարքը տեղի է ունենում:

- ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում: կամ
- Հիմնական շուկայի բացակայության դեպքում ակտիվի կամ պարտավորության համար առավել բարենպաստ շուկայում:

Հիմնական կամ առավել բարենպաստ շուկան պետք է հասանելի լինի իմբին: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ օգտագործելով այն ենթադրությունները, որոնք շուկայի մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց տնտեսական լավագույն շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

Խուժմը օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք համապատասխանում են հանգամանքներին, և որոնց վերաբերյալ առկա են բավարար տվյալներ իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնս օգտագործելով համապատասխան դիտարկելի տվյալների օգտագործումը և նվազագույնի հասցնելով չդիտարկվող տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- 1-ին մակարդակ – համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ – գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ – գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում, Խուժմը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչումը

Ճանաչման ամսաթիվը

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Խուժմը պարտավորվում ձեռք բերել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Սկզբնական չափումը

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական գործիքների դասակարգումը կախված է դրանց պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման թիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման կատեգորիաներ

Խուժմը դասակարգում է իր բոլոր ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով ակտիվների կառավարման թիզնես մոդելի և ակտիվի պայմանագրային պայմանների վրա, չափումն իրականացնելով՝

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման կատեգորիաներ

Խուժմը դասակարգում է իր բոլոր ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով ակտիվների կառավարման բիզնես մոդելի և ակտիվի պայմանագրային պայմանների վրա, չափումն իրականացնելով՝

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խուժմը իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խուժմը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային պարտավորվածություններից և ֆինանսական երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Բանկերում տեղաբաշխված միջոցներ և ամորտիզացված արժեքով այլ ֆինանսական գործիքներ

Խուժմը չափում է Բանկերում տեղաբաշխված միջոցները և այլ ֆինանսական գործիքները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով.
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև:

Բիզնես մոդելի գնահատում

Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով Խուժմը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք Խմբի նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խմբի բիզնես մոդելը գնահատվում է ոչ թե գործիք առ գործիք, այլ համախմբված՝ պորտֆելի մակարդակով, հիմնվելով դիտարկելի գործոնների վրա, ինչպիսիք են.

- Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և Ընկերության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները
- Բիզնեսի կառավարիչների փոխհատուցման եղանակները (օրինակ՝ փոխհատուցումը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքների կամ պայմանագրային դրամական հոսքերի վրա),
- Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Խմբի գնահատման կարևոր գործոններ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն սցենար» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում խմբի սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, հսումբը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

SPPI գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, հսումբը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պայմանագրի մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար հսումբը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ

հսումբը կիրառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պարտքային գործիքների դասակարգում, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

հսումբը թողարկում է ֆինանսական երաշխիքներ, ակրեդիտիվներ և վարկային պարտավորություններ:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար խմբի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարներից առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեք՝ հանած համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիա, և ակնկալվող վարկային կորուստների պահուստ:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության ժամկետի ընթացքում հսումբը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական վարձակալության համար տրված կանխավճարներ

Խուժբը վարձակալներից ստացված կանխավճարները և մատակարարներին տրված կանխավճարները դիտարկում է որպես դրամական հոդվածներ և ճանաչում է դրանց գծով ֆինանսական պարտավորությունները և ֆինանսական ակտիվները:

Կատարողական երաշխիքներ

Կատարողական երաշխիքները պայմանագրեր են, որոնք տրամադրում են փոխհատուցում, երբ մյուս կողմը չի կատարում պայմանագրային պարտավորությունը: Կատարողական երաշխիքի պայմանագրերով նախատեսված ռիսկը այլ կողմի կողմից պայմանագրային պարտավորությունը չկատարելու հավանականությունն է: Կատարողական երաշխիքները չափվում են ՖՀՄՍ 4-ի համաձայն, որը թույլ է տալիս բացահայտել ՖՀՄՍ 9-ի համաձայն կատարողական երաշխիքները, եթե դրանք համապատասխանում են ֆինանսական գործիքի սահմանմանը: ՖՀՄՍ 9-ը սահմանում է ֆինանսական գործիքը որպես ցանկացած պայմանագիր, որն առաջացնում է մի կազմակերպության համար՝ ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպության համար՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք: Կատարողական երաշխիքները կարող են համապատասխանել այս սահմանմանը, եթե դրանք բավարարում են որոշակի չափանիշների, ինչպիսիք են իրավական ուժը և վճարման պարտավորության սահմանումը:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերադասակարգում

Խուժբը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները՝ դրանց սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն բացառիկ հանգամանքների, որոնց դեպքում Խուժբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, բանկերում Նոստրո հաշիվները և ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները, ներառյալ պարտադիր պահուստները ՀՀ դրամով՝ զերծ պայմանագրային սահմանափակումներից: Երեք ամսից ավելի ժամկետով սահմանափակված միջոցները բացառվում են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես ֆինանսական վիճակի մասին, այնպես էլ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Պարտադիր դրամական մնացորդներ ԿԲ-ում.

ԿԲ-ում պարտադիր դրամական մնացորդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով և ներկայացնում են անտոկոս պարտադիր պահուստային ավանդներ, որոնք հասանելի չեն հմբի ամենօրյա գործունեությունը ֆինանսավորելու համար, և, հետևաբար, չեն համարվում դրամական միջոցների և դրանց համարժեքների մաս դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում:

Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ

Վաճառքի և հետգնման պայմանագրերը («ռեպո») դիտվում են որպես ապահովված ֆինանսավորման գործարքներ: Վաճառքի և հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և եթե ստացողը պայմանագրով կամ գործարար սովորույթի համաձայն իրավունք ունի դրանք վաճառել կամ վերագրավադրել, վերադասակարգվում են որպես վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերում տեղաբաշխված միջոցների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գործընկերներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ եկամուտների կազմում՝ հանած առևտրային արժեթղթերի հետ կապված գործառնությունների ծախսերը: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբը բնականոն գործունեության ընթացքում արժույթային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ՝ ֆորվարդները, ֆյուչերսները, սվոպերը և օպցիոնները: Այդ ֆինանսական գործիքները նախատեսված են առևտրի համար և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման հիման վրա կամ գնորոշման մոդելներով, որոնք հիմնված են բազիսային գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքների և այլ գործոնների վրա: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները՝ պարտավորությունների կազմում: Նշված գործառնություններից ստացված արդյունքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ/(վնաս) կամ արտարժույթային գործառնություններից զուտ շահույթ կամ վնաս՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Պարունակվող ածանցյալ գործիքը հիբրիդային գործիքի բաղադրիչ է, որը ներառում է նաև ոչ ածանցյալ մայր-պայմանագիր, որի արդյունքում համակցված գործիքի դրամական հոսքերի մի մասը տատանվում է առանձին ածանցյալ գործիքի նման:

Պարունակվող ածանցյալ գործիքը առաջացնում է փոփոխություններ որոշ կամ բոլոր դրամական միջոցների հոսքերում, որոնք հակառակ դեպքում պահանջվում էին պայմանագրով, կախված սահմանված տոկոսադրույքից, ֆինանսական գործիքի գնից, ապրանքի գնից, արտարժույթի փոխարժեքից, գների ինդեքսից կամ դրույքից, վարկանշից կամ վարկային ինդեքսից, այլ փոփոխականից, պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այն հատուկ չէ պայմանագրի կողմի համար: Ֆինանսական գործիքին կցված, բայց այդ գործիքից անկախ փոխանցվող ածանցյալ գործիքը, կամ գործիքը, որի պայմանագրային կողմը տարբերվում է այդ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմից, չի հանդիսանում պարունակվող ներգրավված ածանցյալ գործիք, այլ առանձին ածանցյալ գործիք է:

Պարտավորություններում կամ ոչ ֆինանսական մայր պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով, եթե համապատասխանում են ածանցյալ գործիքի վերոնշյալ սահմանմանը, նրանց տնտեսական հատկանիշները և ռիսկերը սերտորեն կապված չեն մայր պայմանագրի հետ, և մայր պայմանագիրը չի համարվում առևտրային նպատակներով կնքված կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ներառված ածանցյալ գործիքները, որոնք առանձնացված են հիմնականից, հաշվառվում են իրական արժեքով առևտրային պորտֆելում, իսկ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են համախմբված շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և SPPI գնահատումների հիման վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Փոխառություններ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում խումբն ունի պարտավորություն փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի հաստատուն գումարով դրամական միջոցների կամ այլ ֆինանսական ակտիվների՝ սեփական բաժնեմասային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները իրենց մեջ ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի միջոցները, հաճախորդների հաշիվները, այլ փոխառություններ, թողարկված պարտատոմսերը: հաշվետվությունում: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ փոխառությունները ապաճանաչվում են, ինչպես նաև ամորտիզացիայի գործընթացում:

Եթե խումբը գնում է իր սեփական պարտքը, այն հանվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ստորադաս վարկեր

Ստորադաս վարկերը կարող են վճարվել միայն լուծարման դեպքում, երբ բավարարվել են ավելի բարձր առաջնահերթություն ունեցող այլ պարտատերերի պահանջները: Ստորադաս պարտքը հաշվառվում է ամորտիզացված արժեքով:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը ներառում են մուրհակները, խմբի կողմից թողարկված պարտատոմսերը: Պարտքային արժեթղթերը ներկայացվում են ամորտիզացված արժեքով:

Վարձակալություն

Խումբը՝ որպես վարձակալ

Խումբը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են պայմանագրի հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվները վարձակալության մեկնարկի ամսաթվին (այսինքն՝ հիմքում ընկած ակտիվի օգտագործման համար հասանելի լինելու ամսաթվին): օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը ողջամտորեն համոզված է, որ ձեռք կբերի վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը պայմանագրի ավարտին, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ Էուլայան հաստատուն վճարումները)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումը, վարձակալության փոփոխումն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ խումբը խելամուտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է համընդհանուր վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Վարձակալության փոփոխական վճարումները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքաչափից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ տեղի է ունենում վճարում առաջացնող իրադարձությունը կամ պայմանը:

Վարձակալության վճարների ներկա արժեքը հաշվարկելիս խումբը օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ Էուլայան հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություն և ցածրարժեք ակտիվների վարձակալություն

Խումբը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Խումբը կիրառում է նաև փոքրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն ակտիվների վրա, որոնք համարվում են փոքրարժեք (2,500 հազ. ՀՀ դրամը չգերազանցող): Կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

Գործառնական – խումբը՝ որպես վարձատու

Վարձակալությունները, որոնց դեպքում խումբը չի փոխանցում ակտիվի սեփականության հետ կապված, ըստ Էուլայան, բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակահատվածի ընթացքում, որում դրանք ստացվում են:

Ֆինանսական – խումբը՝ որպես վարձատու

Ֆինանսական վարձակալության ժամկետի մեկնարկի պահից խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ՝ վարձակալությունում զուտ ներդրումներին հավասար գումարով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Համախառն դեբիտորական պարտքի և ներկա արժեքի միջև տարբերությունը ներկայացնում է չվաստակած ֆինանսական եկամուտը: Այս եկամուտը ճանաչվում է վարձակալության ժամկետի ընթացքում՝ կիրառելով վարձակալության մեջ նշված դրույքաչափը (i) 1-ին և 2-րդ փուլերի վարձակալության դեբիտորական պարտքերի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ և (ii) վարձակալության դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքի նկատմամբ՝ ԱՎԿ մոդելի 3-րդ փուլում՝ Վարձակալության բանակցություններին և կազմակերպմանը ուղղակիորեն վերագրվող լրացուցիչ ծախսումները ներառված են ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքի սկզբնական չափման մեջ և նվազեցնում են վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչված եկամտի գումարը: Վարձակալությունից ստացված ֆինանսական եկամուտը գրանցվում է «Այլ տոկոսային հասույթի» կազմում՝ շահույթում կամ վնասում:

Վարկային կորստի պահուստը ճանաչվում է ընդհանուր ԱՎԿ մոդելի համաձայն: ԱՎԿ-ը որոշվում է նույն կերպ, ինչ ամորտիզացված արժեքով չափվող փոխառությունների և կանխավճարների դեպքում և ճանաչվում է դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը ներկայացնելու համար ակնկալվող դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի պահուստային հաշվի միջոցով՝ գեղջված ֆինանսական վարձակալության մեջ նշված տոկոսադրույքներով: Գնահատված ապագա դրամական հոսքերը արտացոլում են դրամական միջոցների հոսքերը, որոնք կարող են առաջանալ վարձակալության ենթակա ակտիվների ձեռքբերման և վաճառքի արդյունքում:

Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտադրություն մարելու զուտ արժեքը, կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Հաշվանցում կատարելու իրավունքը չպետք է պայմանավորված լինի ապագա ժամանակաշրջանի դեպքերով և պետք է ունենա իրավական ուժ բոլոր ստորև ներկայացված դեպքերում՝

- բնականոն գործունեության ընթացքում,
- պարտականությունների չկատարման դեպքում,
- կազմակերպության կամ դրա որևէ գործընկերոջ վճարունակ չլինելու կամ լուծարման ժամանակ:

Այս պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

Վերանայված վարկեր

Հնարավորության դեպքում խումբը ձգտում է վերանայել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմաններն այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարձակալություն, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ խումբը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- Վարկի արժույթի փոփոխություն;
- Վարձակալության գործընկերոջ փոփոխությունը,
- Եթե փոփոխությունն այնպիսին է, որ գործիքն այլևս չի բավարարում SPPI չափանիշին:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Եթե փոփոխությունը չի հանգեցնում զգալիորեն տարբերվող դրամական հոսքերի, փոփոխությունը չի բերում ապաճանաչման: Հիմք ընդունելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (EIR) զեղչված դրամական հոսքերի փոփոխությունը, Խումբը հաշվառում է փոփոխությունից օգուտը կամ վնասը՝ ներկայացնելով այն ֆինանսական արդյունքների մասին համախմբված ֆինանսական հաշվետվությունում որպես տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով (EIR), այն չափով, որքանով արժեզրկումից վնասը դեռ չի հաշվառվել:

Այն փոփոխությունների համար, որոնք չեն հանգեցնում ապաճանաչման, Խումբը նաև վերագնահատում է, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ կամ արդյոք ակտիվները պետք է դասակարգվեն որպես արժեզրկված: Երբ ակտիվը փոփոխության արդյունքում դասակարգվում է որպես արժեզրկված, այն պետք է մնա 3-րդ փուլում: Որպեսզի վերակառուցված վարկը վերադասակարգվի 3-րդ փուլից, պետք է բավարարվեն ստորև նշված պայմանները.

- Ամսական վճարումների գրաֆիկով վարկերի դեպքում, ժամկետանց գումարները ամբողջությամբ վճարվել են, մայր գումարի և տոկոսների 3 անընդմեջ վճարումներ կատարվել են փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն, և 7 օրից ավել ժամկետանց օրեր չկան:
- Ճկուն վճարման գրաֆիկով վարկերի դեպքում, ժամկետանց գումարներ ամբողջությամբ վճարվել են, այնուհետև մայր գումարի և տոկոսների հերթական վճարումները կատարվել են նվազագույնը 6 ամիս փորձաշրջանի համար փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն, և 7 օրից ավել ժամկետանց օրեր չկան:

IBOR-ի բարեփոխման համատեքստում շատ ֆինանսական գործիքներ արդեն փոփոխվել են կամ կփոփոխվեն, քանի որ դրանք անցում են կատարում IBOR-ից RFR-ների: Ֆինանսական գործիքի տոկոսադրույքի փոփոխումից բացի, անցման պահին ֆինանսական գործիքի պայմաններում կարող են կատարվել այլ փոփոխություններ: Տոկոսադրույքի IBOR-ից RFR փոփոխությունը արտացոլելու համար ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների դեպքում Խումբը նախ օգտվում է կիրառական մեղմացումներից, ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 3-ում: Երկրորդ, ցանկացած փոփոխության համար, որը չի դիտարկվում որպես կիրառական մեղմացում, Խումբը կիրառում է դատողություն՝ գնահատելու, թե արդյոք փոփոխությունները Էական են, և եթե այդպես է, ապա ֆինանսական գործիքը ապաճանաչվում է, և նոր ֆինանսական գործիք է ճանաչվում:

Եթե փոփոխությունները Էական չեն, Խումբը ճշգրտում է ֆինանսական գործիքի համախառն հաշվեկշռային արժեքը գործնական նպատակահարմարությամբ չծածկված փոփոխությունների ներկա արժեքով, զեղչված՝ օգտագործելով վերանայված EIR-ը:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ, անհրաժեշտության դեպքում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- Ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը սպառվել է.
- Խումբը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց Էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև,
- Խումբը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

-Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ հսումբը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Խումբը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ հսումբը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Խմբի և նրա սկզբնական փոխատուների միջև էապես տարբեր պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը, ինչպես նաև առկա ֆինանսական պարտավորությունների պայմանների էական փոփոխությունները հաշվառվում են որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Պայմանները էապես տարբերվում են, եթե նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի գեղչված ներկա արժեքը ներառյալ վճարված վճարները՝ առանց ստացված և գեղչված վճարների՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, առնվազն 10%-ով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի գեղչված ներկա արժեքից:

Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ցանկացած ծախսեր կամ վճարներ ճանաչվում են շահույթ կամ վնաս մարումից: Եթե փոխանակումը կամ փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ցանկացած ծախսեր կամ վճարներ ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

Պարտավորությունների փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում մարման, հաշվառվում են որպես գնահատման փոփոխություն՝ օգտագործելով կուտակային փոխհատուցման մեթոդը, ցանկացած օգուտ կամ վնաս ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվեկշռային արժեքների տարբերության տնտեսական Էությունը վերագրվում է սեփականատերերի հետ կապիտալ բնույթի գործարքի:

Հարկային միջավայր

Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը հաշվարկվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ Էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գույքի, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե հույսով կիրառվի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույթները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Ը: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերություններ:

Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումը: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեզրկման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ իրավիճակների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են, որ այդպիսի ակտիվների արժեքը, հնարավոր է, որ չի փոխհատուցվի:

Սկզբնական արժեքով սկզբնական ճանաչումից հետո հողը, շենքերը և փոխադրամիջոցները արտացոլվում են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունն ու կուտակված արժեզրկումից կորուստները: Վերագնահատումն իրականացվում է բավարար պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը բացառվում է՝ միաժամանակ նվազեցվելով ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և ստացված գումարը վերահաշվարկվում է՝ հաշվի առնելով ակտիվի վերագնահատված գումարը: Վերագնահատման արժեքի աճը արտացոլվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում, եթե այն տվյալ ակտիվի արժեքի նախորդ նվազման վերականգնում չէ, որը նախկինում արտացոլվել էր ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Այս դեպքում ակտիվի արժեքի աճը վերագրվում է ֆինանսական արդյունքներին: Վերագնահատումից արժեքի նվազումը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ նախկինում հիմնական միջոցների վերագնահատման պահուստում արտացոլված նույն ակտիվի գծով արժեքի աճի հաշվին այդպիսի նվազեցման անմիջական հաշվանցմանը:

Հիմնական միջոցների միավորի նկատմամբ սեփական կապիտալում ներառված վերագնահատումից աճն ուղղակիորեն փոխանցվում է չբաշխված շահույթին, երբ ակտիվն ապաճանաչվում է:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Ակտիվի մաշվածության հաշվարկումը սկսվում է կատարվել այն ժամանակ, երբ այն օգտագործման համար մատչելի է դառնում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում:

	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Շենքեր	46
Սարքավորումներ	5-10
Տրանսպորտային միջոցներ	7-10
Այլ	7-10

Վարձակալված ակտիվի բարելավումները կապիտալացվում և ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և դրանց օգտակար ծառայության ժամանակահատվածից նվազագույնով՝ գծային հիմունքներով:

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության հաշվարկման մեթոդները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

Վերանորոգումների և արդիականացման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերի կազմում բացառությամբ, եթե դրանք որակավորվում են որպես կապիտալացվող:

Գուղվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուղվիլը սկզբնապես ճանաչվում է հսկի կողմից փոխանցված հատուցման և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների տարբերության արժեքով: Դուստր ընկերության ձեռքբերման ժամանակ առաջացող գուղվիլը ճանաչվում է գուղվիլի և ոչ նյութական ակտիվների կազմում: Ասոցիացված կազմակերպության ձեռքբերման ժամանակ առաջացող գուղվիլը արտացոլվում է ասոցիացված կազմակերպություններում կատարված ներդրումների կազմում: Սկզբնական ճանաչումից հետո գուղվիլը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

Գուղվիլը գնահատվում է արժեզրկման տեսանկյունից յուրաքանչյուր տարի կամ ավելի հաճախ, եթե ինչ-որ իրադարձություններ կամ հանգամանքների փոփոխություններ վկայում են հաշվեկշռային արժեքի արժեզրկման մասին:

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուղվիլը, արժեզրկման տեսանկյունից գնահատելու նպատակով, ձեռքբերման ամսաթվից սկսած բաշխվում է հսկի դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերի միջև, որոնք ակնկալվում է, որ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում կստանան օգուտներ՝ անկախ այն բանից, թե ձեռքբերված կազմակերպության այլ ակտիվներն ու պարտականությունները վերագրվում են այդ դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերին, թե՛ ոչ: Յուրաքանչյուր դրամաստեղծ միավոր կամ դրամաստեղծ միավորների խումբ, որին վերաբերում է գուղվիլը, պետք է.

- իրենից ներկայացնի ներքին կառավարման նպատակով գուղվիլի վերլուծության տեսանկյունից հսկի կազմում առավել ցածր մակարդակի վարչական միավոր, և
- մինչև միավորումը չգերազանցի գործառնական սեզմենտը՝ համաձայն ՖՀՄՍ 8 «Գործառնական սեզմենտներ» ստանդարտի սահմանման:

Գուղվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) փոխհատուցվող արժեքի հիման վրա: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են, եթե դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) -հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող արժեքը: Գուղվիլի արժեզրկումից կորուստները հետագայում չեն հակադարձվում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրեր և լիցենզիաներ:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ 7-10 տարի օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են ոչ նյութական ակտիվի արժեզրկման հայտանիշեր: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկման մեթոդները և ժամկետները վերանայվում են, նվազագույնը՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ խումբը անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավաբանորեն ամրագրված կամ ենթադրվող պարտավորություն և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող ռեսուրսների արտահոսք, ինչպես նաև պարտավորության չափը հնարավոր է արժանահավաստորեն գնահատել:

Կենսաթոշակի և աշխատողների այլ հատուցումների պարտավորություններ

Խումբը չունի կենսաթոշակային պայմանավորվածություններ և նշանակալի հետաշխատանքային նպաստներ:

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ հայեցողական շահաբաժիններով բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

Հետգնված բաժնետոմսեր

Երբ Բանկը կամ իր դուստր կազմակերպությունները գնում են Բանկի բաժնետոմսերը, վճարված փոխհատուցումը, ներառյալ գործարքի հետ կապված ծախսերը և հանած շահութահարկը, նվազեցվում է ընդհանուր կապիտալից՝ որպես հետգնված բաժնետոմսեր, մինչև դրանց չեղյալ հայտարարումը կամ վերաթողարկումը: Երբ նման բաժնետոմսերը հետագայում վաճառվում կամ վերաթողարկվում են, ստացված փոխհատուցումը ներառվում է սեփական կապիտալում: Հետգնված բաժնետոմսերը հաշվառվում են միջին կշռված գնով:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար վավերացման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Հավատարմագրային ակտիվներ

Հավատարմագրային կարգավիճակով պահվող ակտիվները չեն ներկայացվում համախմբված ֆինանսական հաշվետվություններում, քանի որ դրանք խմբի ակտիվները չեն:

Սեզմենտների հաշվառում.

Խմբի սեզմենտային հաշվետվությունը հիմնված է հետևյալ գործառնական սեզմենտների վրա. մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ բանկային գործունեություն, գյուղատնտեսություն, առևտրային և ներդրումային բանկային գործունեություն և ֆինանսական վարձակալություն:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված ռեսուրսների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտները ճանաչվում են, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Խումբ, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն նախքան եկամտի ճանաչումը:

Տոկոսային և համանման եկամուտ և ծախս

Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ կիրառելի դեպքերում՝ ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը:

Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվը դառնում է վարկային առումով արժեզրկված, Խումբը հաշվարկում է տոկոսային հասույթ՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: - Եթե ֆինանսական ակտիվը վերականգնվում է և այլևս արժեզրկված չէ, Խումբը վերադառնում է համախառն հիմքով տոկոսային եկամտի հաշվարկին:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների համար հուսմբը տոկոսային եկամուտը հաշվարկում է՝ հաշվարկելով վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) և կիրառելով այն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով սկզբնական ճանաչման ժամանակ զեղչվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը (ներառյալ վարկային կորուստները)՝ ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքին:

Եթե Փուլ 3-ում դասակարգված ֆինանսական ակտիվի գծով վարկային ռիսկը հետագայում բարելավվի այնպես, որ ակտիվն այլևս վարկային արժեզրկված չլինի, և բարելավումը հնարավոր լինի օբյեկտիվորեն վերագրել իրադարձության, որը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ ակտիվը սահմանվել է որպես վարկային արժեզրկված (այսինքն ակտիվը դառնում է վերականգնման ենթակա), ակտիվը վերադասակարգվում է 3-րդ փուլից և տոկոսային հասույթը հաշվարկվում է՝ կիրառելով EIR-ը համախառն հաշվեկշռային արժեքի վրա: Լրացուցիչ տոկոսային եկամուտը, որը նախկինում շահույթում և վնասում չէր ճանաչվել՝ ելնելով ակտիվի Փուլ 3 բնույթից, սակայն որը ներկայումս ակնկալվում է ստանալ ակտիվի վերականգնումից հետո, ճանաչվում է որպես արժեզրկման հակադարձում:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր ֆինանսական ակտիվներից տոկոսային հասույթը ճանաչվում է՝ օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը, և ներկայացվում շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում՝ «Այլ տոկոսային հասույթ» տողում:

Հաճախորդներին տրված վարկերի գծով տույժերից ստացված տոկոսային հասույթը, որը ներկայացված է շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվությունում «Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային հասույթ» տողում:

Միջնորդավճարների գծով եկամուտ

Հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից համախմբված ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբի.

Միջնորդավճարների գծով եկամուտ, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից

Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեզրկվում է այդ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ համապատասխան կատարողական պարտավորությունները բավարարված են: Նման հոդվածները ներառում են միջնորդավճարների գծով եկամուտը ակտիվների կառավարման, պահառության և կառավարման ու խորհրդատվական այլ ծառայությունների համար միջնորդավճարները: Վարկերի տրամադրման գծով պարտավորության դիմաց միջնորդավճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները հետաձգվում են (վարկերի տրամադրման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

Միջնորդավճարների գծով եկամուտ՝ մատուցված միջնորդային ծառայությունների գծով

Երրորդ անձի անունից գործարքի բանակցություններն անցկացնելու և մասնակցելու համար (օրինակ՝ երբ խմբի կատարողական պարտավորությունն է բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի առքը, կամ ընկերության առք ու վաճառքի համաձայնագրի կնքումը) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո:

Կոմիսիոն վճարները կամ դրանց բաղկացուցիչ մասերը, որոնք կապված են որոշակի կատարողական պարտավորությունների հետ, ճանաչվում են համապատասխան ցուցանիշների բավարարումից հետո: Երբ պայմանագրով նախատեսված է փոփոխական փոխհատուցում, միջնորդավճարների գծով եկամուտը ճանաչվում է միայն այն չափով, որքանով որ հավանական է, որ ճանաչված կուտակային եկամտի զգալի մասի հակադարձում տեղի չի ունենա, մինչև հետագայում լուծվի փոփոխական փոխհատուցման հետ կապված անորոշությունը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Հաճախորդների հավատարմության ծրագրեր

Խուճաբն առաջարկում է հաճախորդների հավատարմության մի շարք ծրագրեր: Նման ծրագրերի հաշվապահական հաշվառումը տարբերվում է՝ կախված նրանից, թե ով է ճանաչվում որպես հաճախորդ, և/կամ Խուճաբն որպես գործակալ, թե որպես պայմանագրի գլխավոր կողմ է հանդես գալիս: Միավորների վրա հիմնված - ծրագրերի դեպքում, Խուճաբն, ընդհանուր առմամբ, ճանաչում է պարտավորություն կուտակված միավորների համար, որոնք ակնկալվում է, որ օգտագործվելու են հաճախորդների կողմից, որը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով, երբ միավորները լրանում են: Պլաստիկ քարտերով գործառնություններից քեշբեքերը նվազեցնում են միջնորդավճարների գծով եկամուտը:

Ճահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Խմբի վճարումը ստանալու իրավունքը:

Արտարժույթի վերահաշվարկ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, որը Բանկի և Նրա դուստր ձեռնարկության գործառնական արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթի՝ գործարքի օրվա միջին շուկայական փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության «Չուտ օգուտ/վնաս արտարժույթի փոխարկումից» հոդվածում: Ոչ դրամական հոդվածների համար, որոնք ներկայացվում են արտարժույթով արտահայտված սկզբնական արժեքով, վերազնահատման ժամանակ կիրառվում է սկզբնական գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամական հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ փոխարժեքի տարբերությունը ներառվում է «Չուտ օգուտ/վնաս արտարժույթով գործարքներից» հոդվածում: ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքները 2022թ. դեկտեմբերի 31-ին և 2021թ. դեկտեմբերի 31-ին կազմել են համապատասխանաբար 393.57 ՀՀ դրամ և 480.14 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի համար, և 420.06 դրամ և 522.59 դրամ 1 Եվրոյի համար:

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

Խմբի աշխատակիցները (ներառյալ ավագ ղեկավարները) վարձատրություն են ստանում բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների տեսքով, այսպիսով աշխատակիցները ծառայություններ են մատուցում բաժնային գործիքների դիմաց (բաժնետոմսով մարվող գործարքներ) վարձատրության նկատառումով:

Բաժնետոմսով մարված գործարքներ

Բաժնետոմսով մարվող գործարքների արժեքը որոշվում է իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ պարգևատրումը տրամադրվում է համապատասխան գնահատման մոդելի կիրառմամբ, որի հետագա մանրամասները տրված են Ծանոթագրություն 23-ում:

Այդ ծախսը ճանաչվում է անձնակազմի ծախսերում՝ սեփական կապիտալի համապատասխան աճի հետ միասին այն ժամանակաշրջանի ընթացքում, որում ծառայությունը մատուցվել է և անհրաժեշտության դեպքում, կատարողականի պայմանները կատարվել են (տրամադրման ժամանակաշրջանում): Կուտակային ծախսը ճանաչվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին որպես սեփական կապիտալով մարվող գործարքներ մինչ իրավունքի առաջացման ամսաթիվը արտացոլում է իրավունքի ստացման ժամկետի երկարաձգումը, ինչը Խմբի լավագույն գնահատականն է բաժնային գործիքների քանակի վերաբերյալ, որոնք, ի վերջո, կպահովվեն: Ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվության ծախսը կամ մուտք արված գումարը ներկայացնում է այդ ժամանակաշրջանի սկզբում և վերջում ճանաչված կուտակային ծախսի շարժը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Սպասարկման և ոչ շուկայական կատարողականի պայմանները հաշվի չեն առնվում իրավունքի ստացման ամսաթվին իրական արժեքը որոշելիս, սակայն պայմանների բավարարման հավանականությունը գնահատվում է որպես հսկի լավագույն գնահատականի մաս, այն բաժնային գործիքների քանակի որոշման ժամանակ, որոնք ի վերջո կհատկացվեն: Շուկայական գործունեության պայմաններն արտացոլվում են շնորհման ամսաթվի իրական արժեքում: Շնորհումների հետ կապված ցանկացած այլ պայմաններ, որոնք ներառված չեն ծառայության պահանջներում, համարվում են չներառվող պայմաններ: Չներառվող պայմաններն արտացոլվում են շնորհումի իրական արժեքում և հանգեցնում են պարգևի անհապաղ ծախսմանը, եթե չկան նաև սպասարկման և/կամ կատարման պայմաններ:

Ծախս չի ճանաչվում այն շնորհումների համար, որոնք, ի վերջո, չեն հատկացվում, քանի որ շուկայական կատարողականը և/կամ սպասարկման պայմանները չեն պահպանվել: Այն դեպքում, երբ պարգևները ներառում են շուկայական կամ ոչ իրավունք առաջացող պայման, գործարքները համարվում են կատարված՝ անկախ նրանից, թե շուկայական կամ իրավունքի առաջացման պայմանը բավարարված է, պայմանով, որ կատարման և/կամ սպասարկման մյուս պայմանները բավարարված են:

Երբ բաժնետոմսով մարված շնորհման պայմանները փոփոխվում են, ճանաչված նվազագույն ծախսը չփոփոխված շնորհման ամսաթվի իրական արժեքն է, պայմանով, որ պահպանվում են մրցանակի բաշխման սկզբնական պայմանները: Լրացուցիչ ծախսը, որը չափվում է փոփոխման ամսաթվի դրությամբ, ճանաչվում է ցանկացած փոփոխության համար, որը մեծացնում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքի ընդհանուր գումարի իրական արժեքը կամ այլ կերպ ձեռնտու է աշխատողին: Եթե մրցանակը չեղարկվում է կազմակերպության կամ կոնտրագենտի կողմից, մրցանակի իրական արժեքի ցանկացած մնացած տարր ճանաչվում է ծախս անմիջապես շահույթի կամ վնասի միջոցով:

Թողարկված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ

Հրապարակվել են 2023թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր, ուժի մեջ է մտել 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար

Երբ ապահովագրական ծածկույթը տրամադրվում է որպես վարկային քարտի պայմանագրային պայմանների մաս, թողարկողը պարտավոր է.

- Առանձնացնել ապահովագրական ծածկույթի բաղադրիչը և դրա նկատմամբ կիրառել ՖՀՄՍ 17-ը
- Կիրառել այլ կիրառելի ստանդարտներ (օրինակ՝ ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15՝ Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ կամ ՀՀՄՍ 37՝ Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ) մյուս բաղադրիչների նկատմամբ:

Վարկային պայմանագրերը, որոնք համապատասխանում են ապահովագրության սահմանմանը, սակայն սահմանափակում են ապահովագրվող դեպքերի փոխհատուցումը ապահովագրի կողմից վճարվող գումարի չափով. նման վարկեր թողարկողները (օրինակ՝ վարկ, որ ներվում է մահվան դեպքում) կարող են ընտրություն կատարել և կիրառել կամ ՖՀՄՍ 17-ը, կամ «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ը: Ընտրությունն արվում է ամբողջ պորտֆելի համար և փոփոխության ենթակա չէ:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և, և պահանջում է բացահայտել համադրելի տեղեկատվություն: Հնարավոր է ստանդարտի կիրառումը նշված ամսաթվից շուտ, եթե կազմակերպությունն արդեն կիրառում է նաև ՖՀՄՍ 9 ու ՖՀՄՍ 15-ը ՖՀՄՍ 17-ը կիրառելուց առաջ:

Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 17-ի ազդեցությունը իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Մեկ գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկ: Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները հստակեցնում են հետաձգված հարկի հաշվառման եղանակները այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապագործարկման պարտավորությունները: Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման դեպքում հետաձգված հարկի ճանաչումից: Նախկինում կար այս բացառության կիրառման անորոշություն որոշակի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվների շահագործումից հանելը, որոնց համար ճանաչվում էր ինչպես ակտիվ, այնպես էլ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ այս բացառությունը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է նման գործարքների գծով ճանաչել հետաձգված հարկ: Համաձայն այս փոփոխությունների, կազմակերպությունները պարտավոր են հետաձգված հարկ ճանաչել այն գործարքների համար, որոնց գծով սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում են հավասար մեծությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ

2020թ. հունվարին, ՀՀՄՍ Խորհուրդը հաստատել է ՀՀՄՍ 1 ստանդարտի պարագրաֆներ 69-ից 76-ում փոփոխությունները՝ հստակեցնելով պարտավորությունները ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները: Փոփոխությունը հստակեցնում է.

- Ի՞նչ է նշանակում վճարումը հետաձգելու իրավունք,
- որ հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- որ դասակարգման վրա չի ազդում այն հավանականությունը, որ կազմակերպությունը կկիրառի իր տարկետման իրավունքը,
- որ միայն այն դեպքում, եթե փոխարկելի պարտավորության մեջ ներկառուցված ածանցյալ գործիքն ինքնին բաժնային գործիք է, պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետադարձ: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները:

Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն: Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության սահմանումները: Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը հավանական է, որ կհամարվի էական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները չեն կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ էական տեղեկատվությունը: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա:

Այնուամենայնիվ, այդպիսի տեղեկատվության բացահայտման դեպքում, այն չպետք է դժվարեցնի հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվության ընկալումը: Այս փոփոխությանն օժանդակելու համար փոփոխություններ են կատարվել նաև ՀՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2-ում՝ «Էականության վերաբերյալ դատողություններ», որը ուղեցույց է տրամադրում հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով բացահայտումների նկատմամբ էականության հայեցակարգի կիրառման վերաբերյալ:

Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Միայնների ուղղում

Տարվա ընթացքում Խումբը ուղղում է կատարել սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա և 2021թ. հունվարի 1-ին ավարտված տարվա համար ներկայացված համապատասխան հաշվետվությունների գծով:

Համաձայն ՀՀՄՍ 8-ի, փոփոխությունները կատարվել են հետընթաց կերպով, և համեմատական թվերը համապատասխանաբար ճշգրտվել են:

Ուղղումները հետևյալն են.

Ուղղում 1. Ներդրումային արժեթղթեր

Խումբն ունի C դասի Visa բաժնետոմսեր, որոնք ներկայացվել էին որպես սեփական կապիտալի գործիքներ ԻԱՄՀՖԱ-ում: Այնուամենայնիվ, C դասի Visa բաժնետոմսերը պարտքային գործիքներ են, որոնք չեն բավարարում SPPI գնահատականին: Տարվա ընթացքում Խումբը ուղղում է կատարել սույն ֆինանսական հաշվետվություններում 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա և 2021թ. հունվարի 1-ին ավարտված տարվա համար ներկայացված համապատասխան հաշվետվությունների գծով: Ֆինանսական հաշվետվություններում Խումբը վերադասակարգել է Visa Inc-ի C դասի սեփական կապիտալում ներդրումները որպես սեփական կապիտալում ներդրումներ ԻԱՇԿ-ով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Ուղղում 2. Հիմնական միջոցներ

Տարվա ընթացքում հուլիսին ուղղում է կատարել սույն ֆինանսական հաշվետվություններում 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա և 2021թ. հունվարի 1-ին ավարտված տարվա համար ներկայացված համապատասխան հաշվետվություններում: 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում որոշ դուրսգրված հիմնական միջոցների սկզբնական արժեքը և կուտակված մաշվածությունը հիմնական միջոցների, օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և ոչ կյոթական ակտիվների ծանոթագրության մեջ նվազեցվել սկզբնական արժեքից և կուտակված մաշվածության գումարից (Ծան. 12):

Սխալը որևէ ազդեցություն չի ունեցել համարի սեփական կապիտալի, ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունների վրա:

Ուղղում 3. Տույժերից և տույժերից ստացված եկամուտներ

Տարվա ընթացքում հուլիսին ուղղում է կատարել այս ֆինանսական հաշվետվություններում 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համապատասխան հաշվետվություններում: 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում տույժերից և տուգանքներից ստացված եկամուտները ներկայացված են «Այլ եկամուտ» տողում՝ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Խուլմբը վերադասակարգել է տույժերից և տուգանքներից եկամուտը «Այլ եկամուտներից» վերադասակարգելով «Տոկոսային եկամուտներ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույթով»՝ հաճախորդներին տրված վարկերից ստացված տույժերի դեպքում, «Այլ տոկոսային հասույթ»՝ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք միջոցների շրջանակում ստացված տուգանքն գծով և գտել է ժամկետային ավանդների դադարեցումից ստացված տոկոսային ծախսերը:

Վերադասակարգում

Տարվա ընթացքում հուլիսին փոխել է 2021 թ.դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և սեփական կապիտալի փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված այլ համապարփակ եկամուտների որոշ մասի ներկայացումը, որը ճանաչվել էր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների պահուստում՝ դրանք վերադասակարգելով «հիմնական միջոցների վերագնահատումից աճ» հոդված: Խուլմբը կարծում է, որ փոփոխությունը ապահովում է օգտագործողների համար ավելի հավաստի և օգտակար տեղեկատվություն: Համաձայն ՀՀՄՍ 8-ի, փոփոխությունը կատարվել է հետընթաց կերպով, համեմատական ցուցանիշները համապատասխանաբար վերանայվել են:

Ֆինանսական վիճակի մասին և սեփական կապիտալի փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունների վրա ուղղումների ազդեցությունը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ հետևյալն էր.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Սկզբնապես ներկայացված	Ուղղում 1	Վերաներկայացված առ 1 հունվարի 2021թ.
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	2,890,036	(1,232,036)	1,658,000
Զբաղիված շահույթ	36,755,091	1,232,036	37,987,127

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական վիճակի մասին և սեփական կապիտալի փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունների վրա ուղղումների ազդեցությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն էր.

Հազ. ՀՀ դրամ	Սկզբնապես ներկայացված	Ուղղում 1	Վերադասա- կարգում	Վերաներկայացված առ 31 դեկտեմբերի 2021թ.
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	2,550,569	-	461,812	3,012,381
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	3,168,514	(957,108)	(461,812)	1,749,594
Զբաղիված շահույթ	45,296,832	957,108	-	46,253,940

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության վրա ուղղումների ազդեցությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի գումարների վրա հետևյալն էր.

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Սկզբնապես ներկայացված	Ուղղում 1	Ուղղում 3	Վերաներկայացված առ 31 դեկտեմբերի 2021թ.
Շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվություն					
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ					
	25	43,240,112	-	1,844,467	45,084,579
Այլ տոկոսային հասույթ	25	3,498,291	-	26,422	3,524,713
Տոկոսային ծախս	25	(21,353,781)	-	268,095	(21,085,686)
Չուտ օգուտ/(վնաս) շահույթի և վնասի միջոցով իրական արժեքով ֆինանսական գործիքներից					
		560,811	(250,880)	-	309,931
Այլ եկամուտ	27	3,022,604		(2,138,984)	883,620
Շահութահարկի գծով ծախս	13	(2,803,449)	45,159	-	(2,758,290)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների գծով վնասներ					
		(253,375)	250,880	-	(2,495)
Շահութահարկ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի տարրերի գծով					
		(73,356)	(45,159)	-	(118,515)

4 Առանցքային հաշվապահական դատողություններ և գնահատումներ

Դատողություններ

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում ղեկավարությունը կատարել է հետևյալ դատողությունները, բացառությամբ գնահատումների, որոնք առավել էական ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա.

Գնահատումներում անորոշությունները

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում ղեկավարությունն օգտագործել է իր դատողությունները և կատարել գնահատումներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները որոշելիս: Առավել էական են հանդիսացել հետևյալ դատողությունները և գնահատումները.

Հողի, շենքերի և ավտոտրանսպորտային միջոցների վերագնահատում (Ծանոթագրություն 32)

Գույքի իրական արժեքը որոշվում է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա՝ էապես ճշգրտված՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Խումբը ներգրավում է անկախ փորձագետների՝ իր տարածքների և տրանսպորտային միջոցների գնահատման համար:

Իրական արժեքի չափում

Եթե ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները չեն կարող ստացվել ակտիվ շուկաներից, դրանք որոշվում են գնահատման մի շարք մեթոդներով՝ մաթեմատիկական մոդելների կիրառմամբ: Այս մոդելների տվյալները վերցվում են դիտարկելի շուկաներից, եթե դա հնարավոր է, իսկ երբ դա հնարավոր չէ, իրական արժեքները սահմանելու համար անհրաժեշտ է դատողությունների որոշակի աստիճան: Լրացուցիչ մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 32-ում:

Բաժնետոմսով մարվող գործարքների արժեքը որոշվում է Բանկի բաժնետոմսերի իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ դրամաշնորհը տրամադրվում է՝ օգտագործելով համապատասխան գնահատման մոդելը: Այս մոդելների տվյալները վերցվում են դիտարկելի շուկաներից, եթե դա հնարավոր է, իսկ երբ դա հնարավոր չէ, իրական արժեքները սահմանելու համար անհրաժեշտ է դատողությունների որոշակի աստիճան, որի հետագա մանրամասները տրված են Ծանոթագրություն 23-ում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ

Ֆինանսական ակտիվների բոլոր կատեգորիաներում արժեզրկումից կորուստների չափումը պահանջում է դատողություն, մասնավորապես, ապագա դրամական հոսքերի և գրավի արժեքների գումարի և ժամկետների գնահատում արժեզրկումից կորուստները և վարկային ռիսկի զգալի աճի գնահատականները որոշելիս: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել տարբեր մակարդակների պահուստների: Բացի այդ, գործունեության լայնածավալ խափանումները կարող են առաջացնել իրացվելիության խնդիրներ որոշ կազմակերպությունների և սպառողների համար: Խմբի ԱՎԿ-ի հաշվարկները բարդ մոդելների գործածման արդյունք են՝ հիմքում ընկած՝ փոփոխական ելակետային տվյալների ընտրության և դրանց փոխկախվածության հետ կապված մի շարք ենթադրություններով: ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են.

- Կոլեկտիվ հիմունքներով PD-ների, EAD-ների և LGD-ների գնահատման վիճակագրական մոդելներ.
- Ֆինանսական ակտիվների սեզմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ը գնահատվում է կոլեկտիվ հիմունքներով.
- ԱՎԿ-ի մոդելների ձևավորումը, ներառյալ՝ բազմաթիվ բանաձևերի և մուլտիպլիկատիվ տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսական տվյալների (օրինակ՝ գործազրկության մակարդակը, գրավի արժեքը) առնչության որոշումը և դրանց ազդեցությունը PD-ի, EAD-ի և LGD-ի վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրություն և նրանց հավանականությունների կշիռների որոշում՝ գնահատելու տնտեսական ելակետային տվյալները ԱՎԿ մոդելների համար:

4 Առանցքային հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ի ֆինանսական վիճակի համախմբված հաշվետվությունում ճանաչված վարկի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների արժեզրկման գծով պահուստը կազմել 5,982,161 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 8,319,892 հազ. ՀՀՀՀ դրամ): Ավելի մանրամասն տես Ծանոթագրություններ 10 և 11.

Վարձակալություն-լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի գնահատումը

Խումբը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալության ենթադրվող տոկոսադրույքը, հետևաբար, ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները չափելու համար այն օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը (IBR): Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը Խումբը ստիպված կլինի վճարել համանման ժամկետով և համանման ապահովմամբ այն փոխառու միջոցների դիմաց, որոնք անհրաժեշտ են համանման տնտեսական միջավայրում համա-նման արժեք ունեցող օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ստացման համար: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը (IBR) այն տոկոսադրույքն է, որը Խումբը պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար՝ համանման տնտեսական միջավայրում համանման արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման նպատակով: Հետևաբար, լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն (IBR) արտացոլում է այն, ինչ Խումբը «պետք է վճարեր», որը պահանջում է գնահատել, երբ դիտարկվող տոկոսադրույքներ մատչելի չեն (օրինակ՝ դուստր ընկերությունների համար, որոնք ֆինանսավորման գործարքներ չեն կնքում) կամ երբ դրանք պետք է ճշգրտվեն՝ արտացոլելու ֆինանսական վարձակալության ժամկետներն ու պայմանները (օրինակ, երբ վարձակալությունները դուստր ընկերության գործառնական արժույթով չեն):

Խումբը գնահատում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն (IBR)՝ օգտագործելով դիտարկելի ելակետային տվյալները (օրինակ՝ շուկայական տոկոսադրույքները), երբ առկա է, և պահանջվում է իրականացնել ընկերությանը բնորոշ որոշակի գնահատումներ (օրինակ՝ դուստր ընկերության առանձին վարկանիշը):

Վարձակալություն - երկարաձգման օպցիոններ

Վարձակալության ժամկետը որոշելիս Խմբի ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք տնտեսական դրդապատճառ են ստեղծում երկարաձգման օպցիոնը կիրառելու կամ դադարեցման օպցիոնը չկիրառելու համար: Երկարաձգման օպցիոնները (կամ դադարեցման օպցիոններին հաջորդող ժամկետները) ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, եթե առկա է ողջամիտ վստահություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու):

Գնահատումը վերանայվում է, եթե տեղի է ունենում էական իրադարձություն կամ հանգամանքների էական փոփոխություն, որն ազդում է այս գնահատման վրա և գտնվում է վարձակալի վերահսկողության ներքո:

5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2022թ.	2021թ.
Կանխիկ միջոցներ	21,703,944	17,723,893
Ընթացիկ հաշիվներ Կենտրոնական բանկում, ներառյալ պարտադիր պահուստները (չսահմանափակված մաս, տես Ծանոթագրություն 8)	58,759,074	76,712,728
<i>Ընթացիկ հաշիվներ այլ բանկերում</i>		
- վարկանշված BBB-(Baa3) և ավելի	1,243,082	1,477,055
- գնահատված BBB-(Baa3)-ից ցածր և առանց վարկանիշի	6,716,379	667,605
Արժեզրկում	(53,194)	(133,293)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	88,369,285	96,447,988

Վարկավորման որակը բացահայտելու համար Բանկը օգտագործում է Moody's վարկանիշային գործակալության կողմից տրված վարկանիշները:

5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկում ընթացիկ հաշիվները ներառում են պարտադիր պահուստ՝ 19,602,439 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 23,850,732 հազ. ՀՀ դրամ):

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 4%-ի չափով (2021թ.՝ 4%) և արտարժույթով ներգրավված գումարների 18%-ի չափով (2021: 18%):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ բանկերում ընթացիկ հաշիվներից 67%-ը՝ 5,322,574 հազ. ՀՀ դրամ, կազմում են մեկ օտարերկրյա բանկում թղթակցային հաշվի մնացորդները (2021թ.՝ 60%՝ 1,278,048 հազ. ՀՀ դրամ երկու օտարերկրյա բանկերում)

2022թ. հուլիսից բանկերը պարտավոր են արտարժույթով ներգրավված գումարների 12%-ը (2021թ.՝ 10%) պահել ՀՀ դրամով որպես դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում և 6% (2021թ.՝ 8%)՝ արտարժույթով:

Ավելին, սահմանափակված է պահուստավորված գումարները արտարժույթով հանելու բանկերի հնարավորությունը, ուստի հսումբը արտարժույթով ավանդադրված պարտադիր պահուստները դասակարգում է որպես Բանկերում տեղաբաշխված միջոցներ (Ծանոթագրություն 8):

Դրամական միջոցների համարժեքների բոլոր մնացորդները վերագրված են 1-ին փուլին: Ստորև ներկայացված է տարվա ընթացքում ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը:

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	133,293	69,831
Փոփոխություններ ԱՎԿ-ում	(68,891)	75,414
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(11,208)	(11,952)
Առ 31 դեկտեմբերի	53,194	133,293

Դրամական միջոցների և դրանց համարժեքների վարկային որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է «Ռիսկերի կառավարում» Ծանոթագրություն 31-ում:

6 Առևտրային արժեթղթեր

Առևտրային արժեթղթերը ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հայկական բանկերի կորպորատիվ պարտատուներ	-	433,697
Առևտրային արժեթղթեր	-	433,697

2019թ. մայիսին հսումբը ձեռք է բերել հայկական բանկի կորպորատիվ պարտատու 9.75% տոկոսադրույքով և մինչև 2022թ.-ի մայիսը մարման ժամկետով:

7 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

հսումբը օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքները առևտրային նպատակներով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս որպես ակտիվներ և պարտավորություններ ներկայացված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական և անվանական արժեքները:

	2022թ.		2021թ.	
	Անվանական արժեք	Իրական արժեք	Անվանական արժեք	Իրական արժեք
Հազ. ՀՀ դրամ				
Ակտիվներ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Տոկոսադրույքի սվոպ	5,673,542	327,011	9,166,309	36,221
Արտարժույթի սվոպ	2,136,573	36,273	3,415,776	2,404
	7,810,115	363,284	12,582,085	38,625
Պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Արտարժույթի սվոպ	-	-	-	-
	-	-	-	-

8 Բանկերում տեղաբաշխված միջոցներ

Բանկերում տեղաբաշխված միջոցների կազմը

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ		
Վարկային քարտերով գործառնությունների գծով դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	2,777,500	1,572,500
Արտարժույթով պարտադիր պահուստներ ՀՀ ԿԲ-ում (Ծան. 5)	21,675,649	11,585,135
Ընդամենը	24,453,149	13,157,635
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ		
Հայկական բանկեր	199,889	487,894
Օտարերկրյա բանկեր	1,153,961	739,754
Ընդամենը այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ	1,353,850	1,227,648
Այլ դեբիտորական պարտքեր		
Չմարված գործարքներ	22,273,672	4,119,022
Դրամական փոխանցումների համակարգերից ստացվելիք գումարներ	1,852,078	1,047,268
Պլաստիկ քարտերով գործարքներից ստացվելիք գումարներ	425,196	123,526
Հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ		
Հայաստանի բանկերից ստացվելիք գումարներ	559,459	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ մինչև արժեզրկումը	50,917,404	19,675,099
Արժեզրկում	(111,174)	(56,016)
Ընդամենը բանկերում տեղաբաշխված միջոցներ	50,806,230	19,619,083

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Կենտրոնական Բանկում պարտադիր պահուստները ներառում են արտարժույթով արտահայտված պահուստներ՝ 21,675,649 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 11,585,135 հազ. ՀՀ դրամ) (տես Ծանոթագրություն 5):

Չմարված գործարքների մեջ ներառված գումարը դեկտեմբերի 31-ի դրությամբ չի հաշվարկվել համբի ԿԲ հաշվում: Այս գումարը մուտքագրվել է հունվարի առաջին աշխատանքային օրը որպես դրամական միջոց համբի ընթացիկ հաշվին:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,153,961 հազ. դրամ (2021թ.՝ 739,754 հազ. դրամ) ավանդների տեսքով տեղաբաշխված է միջազգայնորեն ճանաչված չորս ՏՀԶԿ բանկերում (2021թ.՝ երեք), որոնք հանդիսանում են համբի հիմնական գործընկերները միջազգային գործառնությունների իրականացման գծով:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերում տեղաբաշխված միջոցները ներառում են 199,889 հազ. ՀՀ դրամի (2021 թ.՝ 487,894 հազ. ՀՀ դրամի) չափով վարկեր տեղաբաշխված մեկ հայկական բանկում (2021 թ.՝ մեկ):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հումբը հակադարձ հետգնման պայմանագրեր էր կնքել հայկական մեկ բանկի հետ: Այս պայմանագրերով գրավի ապահովման միջոց են հանդիսանում Հայաստանի պետական պարտատոմսերը՝ 737,176 հազ. ՀՀ դրամ իրական արժեքով:

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում բանկերում տեղաբաշխված միջոցների հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ.ՀՀ դրամ	Փուլ 1	Ընդամենը
ԱՎԿ պահուստ առ 1 հունվարի 2022թ.	56,016	56,016
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	111,174	111,174
Մարված ակտիվներ	(56,016)	(56,016)
31 դեկտեմբերի 2022թ.	111,174	111,174

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

8 Բանկերում տեղաբաշխված միջոցներ (շարունակություն)

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում բանկերում տեղաբաշխված միջոցների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱԿԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Ընդամենը
ԱԿԿ պահուստ առ 1 հունվարի 2021թ.	71,910	71,910
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	56,016	56,016
Մարված ակտիվներ	(71,910)	(71,910)
31 դեկտեմբերի 2021թ.	56,016	56,016

Բանկերում տեղաբաշխված միջոցների վարկային որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է «Ռիսկերի կառավարում» Ծանոթագրություն 31-ում:

9 Ներդրումային արժեթղթեր

Ներդրումային արժեթղթերը 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր		
Բանկի կողմից պահվող		
Հայկական ընկերությունների մուրհակներ	169,536	180,897
Հանած՝ արժեքովման գծով պահուստ	(79,196)	(62,680)
Ընդամենը Բանկի կողմից պահվող ամորտիզացված արժեքով արժեթղթեր	90,340	118,217

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ. (վերաներկայաց ված)	1 հունվարի 2021թ. (վերաներկայաց ված)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային և այլ ֆիքսված եկամտով գործիքներ			
Բանկի կողմից պահվող			
Պետական պարտատուներ			
ՀՀ պետական արժեթղթեր	12,033,575	16,541,954	9,452,410
Կորպորատիվ պարտատուներ			
Հայկական ընկերությունների մուրհակներ	3,232,827	4,460,248	4,824,872
Բաժնային գործիքներ			
Չգնանշված բաժնային արժեթղթեր	112,278	115,381	117,876
Ընդամենը բանկի կողմից պահվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային և այլ ֆիքսված եկամտով գործիքներ	15,378,680	21,117,583	14,395,158

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ. (վերաներկայաց ված)	1 հունվարի 2021թ. (վերաներկայաց ված)
Բանկի կողմից պահվող, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային գործիքներ			
Գնանշված բաժնային արժեթղթեր – Visa Series C-ի բաժնետոմսեր	2,153,118	2,759,029	3,009,908
Ընդամենը Բանկի կողմից պահվող, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային և այլ ֆիքսված եկամտով գործիքներ	2,153,118	2,759,029	3,009,908

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

9 Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

Այս բացահայտման տեղեկատվությունը վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3):

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված գործիքներ		
Բաժնային գործիքներ		
ՀՀ պետական արժեթղթեր	6,019,389	-
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված գործիքներ	6,019,389	-

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշված բաժնային արժեթղթերը հիմնականում ներառում են պարտադիր բաժնետոմսեր բորսաներում և քլիրինգային կենտրոններում:

2022թ. հունվար իր՝ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնետմասից ստացել է 9,199 հազ. ՀՀ դրամ շահաբաժիններ (2021թ.՝ 12,455 հազ. ՀՀ դրամ), որոնք համախմբված հաշվետվությունում ճանաչվել են որպես այլ եկամուտ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային գործիքների 84,5%-ը (2021թ.՝ 78,76%) ներկայացված են Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերով:

2022 և 2021 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ մի արժեթուղթ չի եղել ժամկետանց կամ արժեզրկված, և չի եղել ներդրումային արժեթղթերի վերասակարկված մնացորդներ, որոնք այլապես ժամկետանց կլինեն:

Պարտքային գործիքների վարկային որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է «Ռիսկերի կառավարում» Ծանոթագրություն 31-ում:

Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքների և դրա հետ կապված ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2022թ.	180,897	-	180,897
Մարված ակտիվներ	-	(11,361)	(11,361)
Տեղափոխումներ Փուլ 2	(180,897)	180,897	-
31 դեկտեմբերի 2022թ.	-	169,536	169,536

Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Ընդամենը
ԱՎԿ-ները 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	62,680	-	62,680
Տեղափոխումներ Փուլ 2	(62,680)	62,680	-
Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը	-	16,516	16,516
Ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	-	79,196	79,196
31 դեկտեմբերի 2022թ.	-	79,196	79,196

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքների և դրա հետ կապված ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

9 Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1	Փուլ 2	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2022թ.	21,002,200	-	21,002,200
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	6,722,661	-	6,722,661
Մարված ակտիվներ	(4,147,786)	(15,909)	(4,163,695)
Տեղափոխումներ Փուլ 2	(3,429,525)	3,429,525	-
Իրական արժեքի զուտ փոփոխություն	(410,670)	(66,024)	(476,694)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(1,333,233)	(465,448)	(1,798,681)
31 դեկտեմբերի 2022թ.	18,403,647	2,882,144	21,285,791

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1	Փուլ 2	Ընդամենը
ԱՎԿ-ները 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	613,395	-	613,395
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	318,675	-	318,675
Մարված ակտիվներ	(14,793)	-	(14,793)
Տեղափոխումներ Փուլ 2	(649,216)	649,216	-
Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը	-	-	-
Ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	-	2,245	2,245
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(61,564)	-	(61,564)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(15,992)	(70,117)	(86,109)
31 դեկտեմբերի 2022թ.	190,505	581,344	771,849

Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	180,897	180,897
31 դեկտեմբերի 2021թ.	180,897	180,897

Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2021թ.	-	-
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	62,680	62,680
31 դեկտեմբերի 2021թ.	62,680	62,680

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	14,277,282	14,277,282
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	11,639,379	11,639,379
Մարված ակտիվներ	(3,824,060)	(3,824,060)
Իրական արժեքի զուտ փոփոխություն	(226,739)	(226,739)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(863,660)	(863,660)
31 դեկտեմբերի 2021թ.	21,002,202	21,002,202

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2021թ.	309,022	309,022
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	504,687	504,687
Մարված ակտիվներ	(149,562)	(149,562)
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(41,215)	(41,215)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(9,537)	(9,537)
31 դեկտեմբերի 2021թ.	613,395	613,395

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

10 Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Կորպորատիվ վարկեր		
ՓՄՁ վարկեր	92,434,438	72,036,337
Վարկեր խոշոր կորպորատիվ հաճախորդներին	53,906,606	47,850,286
Ընդամենը վարկեր կորպորատիվ հաճախորդներին	146,341,044	119,886,623
Մանրածախ վարկեր (բացի գյուղատնտեսականից)		
Սպառողական վարկեր	101,971,629	76,471,101
Հիփոթեքային վարկեր	42,553,868	32,885,091
Վարկային քարտեր	12,102,219	11,282,532
Ոսկու գրավադրմամբ վարկեր	135	11,021
Ընդամենը վարկեր մանրածախ հաճախորդներին	156,627,851	120,649,745
Գյուղատնտեսական վարկեր՝ մանրածախ	94,712,827	99,751,788
Գյուղատնտեսական վարկեր՝ կորպորատիվ	14,069,596	7,902,736
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր հաճախորդներին	108,782,423	107,654,524
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	411,751,318	348,190,892
Արժեզրկման գծով պահուստ	(5,432,521)	(7,662,527)
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով, գուտ	406,318,797	340,528,365

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստ ամորտիզացված արժեքով

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում կորպորատիվ վարկավորման հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Կորպորատիվ վարկավորում Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	POCI	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2022թ.	103,933,331	9,673,924	6,147,855	131,513	119,886,623
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	85,047,567	-	-	-	85,047,567
Մարված ակտիվներ	(41,608,759)	(6,136,334)	(2,836,628)	(102,311)	(50,684,032)
Տեղափոխումներ Փուլ 1	588,888	(588,888)	-	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(2,319,256)	2,319,256	-	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(1,317,531)	(403,030)	1,720,561	-	-
Վերականգնումներ	-	-	14,998	-	14,998
Դուրս գրված գումարներ	-	-	(9,845)	-	(9,845)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(7,009,059)	(374,966)	(530,242)	-	(7,914,267)
31 դեկտեմբերի 2022թ.	137,315,181	4,489,962	4,506,699	29,202	146,341,044

«ԱՎԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

10 Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Կորպորատիվ վարկավորում <i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	ՓՕԸ	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2022թ.	276,045	246,345	1,477,136	31,224	2,030,750
<i>Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.</i>					
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	471,676	-	-	-	471,676
Մարված ակտիվներ	(68,877)	(136,479)	(289,823)	(9,430)	(504,609)
Տեղափոխումներ Փուլ 1	13,463	(13,463)	-	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(32,603)	32,603	-	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(197,903)	(28,057)	225,960	-	-
<i>Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա</i>	(12,266)	4,089	233,853	-	225,676
<i>ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ</i>	(15,470)	(37,280)	(480,411)	(13,903)	(547,064)
Ընդամենը ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.	158,020	(178,587)	(310,421)	(23,333)	(354,321)
<i>Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա չազդող փոփոխություններ.</i>					
Չեղչի հակադարձում (սվազեցված տոկոսային հասույթից)	-	-	44,699	-	44,699
Վերականգնումներ	-	-	14,998	-	14,998
Դուրս գրված գումարներ	-	-	(9,845)	-	(9,845)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(22,383)	(4,651)	(105,472)	-	(132,506)
31 դեկտեմբերի 2022թ.	411,682	63,107	1,111,095	7,891	1,593,775

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստ ամորտիզացված արժեքով

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում գյուղատնտեսական վարկերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Գյուղատնտեսական վարկեր <i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2022թ.	101,256,390	2,527,251	3,870,883	107,654,524
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	51,620,820	-	-	51,620,820
Մարված ակտիվներ	(45,538,171)	(1,398,492)	(2,795,304)	(49,731,967)
Տեղափոխումներ Փուլ 1	382,211	(378,352)	(3,859)	-
Տեղափոխումներ Փուլ 2	(882,117)	889,767	(7,650)	-
Տեղափոխումներ Փուլ 3	(1,362,964)	(232,567)	1,595,531	-
Վերականգնումներ	-	-	92,387	92,387
Դուրս գրված գումարներ	-	-	(140,281)	(140,281)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(630,192)	(17,064)	(65,804)	(713,060)
31 դեկտեմբերի 2022թ.	104,845,977	1,390,543	2,545,903	108,782,423

«ԱՎԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

10 Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Գյուղատնտեսական վարկեր				
<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2022թ.	653,967	65,199	1,090,828	1,809,994
<i>Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.</i>				
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	354,314	-	-	354,314
Մարված ակտիվներ	(112,378)	(16,049)	(435,804)	(564,231)
Տեղափոխումներ Փուլ 1	12,387	(10,757)	(1,630)	-
Տեղափոխումներ Փուլ 2	(8,842)	11,777	(2,935)	-
Տեղափոխումներ Փուլ 3	(198,639)	(15,385)	214,024	-
Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	(11,412)	5,403	173,416	167,407
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(356,275)	(17,386)	(381,151)	(754,812)
Ընդամենը ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.	(320,845)	(42,397)	(434,080)	(797,322)
<i>Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա չազդող փոփոխություններ.</i>				
Չեղչի հակադարձում (սվազեցված տոկոսային հասույթից)	-	-	70,819	70,819
Վերականգնումներ	-	-	92,387	92,387
Դուրս գրված գումարներ	-	-	(140,281)	(140,281)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(3,858)	(428)	(14,737)	(19,023)
31 դեկտեմբերի 2022թ.	329,264	22,374	664,936	1,016,574

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստ ամորտիզացված արժեքով

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում սպառողական վարկերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Սպառողական վարկեր				
<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2022թ.	68,940,006	2,933,787	4,597,308	76,471,101
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	66,732,347	-	-	66,732,347
Մարված ակտիվներ	(36,019,696)	(1,371,953)	(3,788,823)	(41,180,472)
Տեղափոխումներ Փուլ 1	175,193	(165,274)	(9,919)	-
Տեղափոխումներ Փուլ 2	(1,333,937)	1,333,937	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(2,319,065)	(616,144)	2,935,209	-
Վերականգնումներ	-	-	28,024	28,024
Դուրս գրված գումարներ	-	-	(46,160)	(46,160)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(28,456)	(2,003)	(2,752)	(33,211)
31 դեկտեմբերի 2022թ.	96,146,392	2,112,350	3,712,887	101,971,629

«ԱՎԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

10 Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Սպառողական վարկեր Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2022թ.	1,062,623	250,576	1,657,763	2,970,962
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	869,057	-	-	869,057
Մարված ակտիվներ	(307,188)	(36,286)	(400,751)	(744,225)
Տեղափոխումներ Փուլ 1	15,878	(12,522)	(3,356)	-
Տեղափոխումներ Փուլ 2	(65,054)	65,054	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(403,523)	(98,320)	501,843	-
Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	(15,074)	29,818	385,951	400,695
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(487,827)	(81,773)	(879,865)	(1,449,465)
Ընդամենը ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.	(393,731)	(134,029)	(396,178)	(923,938)
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա չազդող փոփոխություններ.				
Չեղչի հակադարձում (սվազեցված տոկոսային հասույթից)	-	-	163,945	163,945
Վերականգնումներ	-	-	28,024	28,024
Դուրս գրված գումարներ	-	-	(46,160)	(46,160)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(73)	(15)	(1,593)	(1,681)
31 դեկտեմբերի 2022թ.	668,819	116,532	1,405,801	2,191,152

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստ ամորտիզացված արժեքով

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հիփոթեքային վարկերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Հիփոթեքային վարկեր Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	POCI	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2022թ.	31,006,708	1,044,399	778,854	55,130	32,885,091
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	16,406,575	-	-	-	16,406,575
Մարված ակտիվներ	(5,528,704)	(244,243)	(270,257)	(10,031)	(6,053,235)
Տեղափոխումներ Փուլ 1	138,782	(138,782)	-	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(181,428)	181,428	-	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(329,336)	(121,771)	451,107	-	-
Վերականգնումներ	-	-	5,795	-	5,795
Դուրս գրված գումարներ	-	-	(4,385)	-	(4,385)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(574,200)	(55,281)	(50,452)	(6,040)	(685,973)
31 դեկտեմբերի 2022թ.	40,938,397	665,750	910,662	39,059	42,553,868

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

10 Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստ ամորտիզացված արժեքով

Հիփոթեքային վարկեր Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	ՍՈՒ	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2022թ.	122,484	43,678	241,802	21,986	429,950
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.					
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	18,967	-	-	-	18,967
Մարված ակտիվներ	(10,359)	(2,536)	(33,178)	(1,045)	(47,118)
Տեղափոխումներ Փուլ 1	5,767	(5,767)	-	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(1,997)	1,997	-	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(13,324)	(9,331)	22,655	-	-
Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	(5,643)	2,194	86,202	-	82,753
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(74,805)	(17,876)	(45,171)	(14,185)	(152,037)
Ընդամենը ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.	(81,394)	(31,319)	30,508	(15,230)	(97,435)
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող չափող փոփոխություններ.					
Չեղծի հակադարձում (նվազեցված տոկոսային հասույթից)	-	-	31,751	-	31,751
Վերականգնումներ	-	-	5,795	-	5,795
Դուրս գրված գումարներ	-	-	(4,385)	-	(4,385)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(566)	(974)	(17,076)	-	(18,616)
31 դեկտեմբերի 2022թ.	40,524	11,385	288,395	6,756	347,060

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում վարկային քարտերի և ոսկու գրավադրմամբ վարկերի հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Վարկային քարտեր և ոսկու գրավադրմամբ վարկեր

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի 2022թ.	10,044,163	372,724	876,666	11,293,553
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	5,153,806	-	-	5,153,806
Մարված ակտիվներ	(3,285,537)	(152,195)	(575,200)	(4,012,932)
Տեղափոխումներ Փուլ 1	41,803	(41,803)	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(122,226)	122,226	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(310,792)	(63,168)	373,960	-
Վերականգնումներ	-	-	12,238	12,238
Դուրս գրված գումարներ	-	-	(13,728)	(13,728)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(287,499)	(10,638)	(32,446)	(330,583)
31 դեկտեմբերի 2022թ.	11,233,718	227,146	641,490	12,102,354

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

10 Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Վարկային քարտեր և ոսկու գրավադրմամբ վարկեր

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2022թ.	136,674	15,786	268,411	420,871
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.				
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	71,879	-	-	71,879
Մարված ակտիվներ	(39,186)	(3,044)	(102,797)	(145,027)
Տեղափոխումներ Փուլ 1	1,226	(1,226)	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(3,762)	3,762	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(51,169)	(6,591)	57,760	-
Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	(993)	3,471	57,052	59,530
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(50,578)	(2,935)	(84,600)	(138,113)
Ընդամենը ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա ազդող փոփոխություններ.	(72,583)	(6,563)	(72,585)	(151,731)
Ժամանակահատվածի ընթացքում վարկային կորստի պահուստի վրա չազդող փոփոխություններ.				
Չեղչի հակադարձում (սվազեցված տոկոսային հասույթից)	-	-	24,718	24,718
Վերականգնումներ	-	-	12,238	12,238
Դուրս գրված գումարներ	-	-	(13,728)	(13,728)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(1,310)	(312)	(6,786)	(8,408)
31 դեկտեմբերի 2022թ.	62,781	8,911	212,268	283,960

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում կորպորատիվ վարկավորման հետ կապված համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Կորպորատիվ վարկավորում

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	ՓՕԸ	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեքը					
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	87,531,773	14,425,978	6,632,360	244,519	108,834,630
Ստեղծված կամ նոր ձեռքբերված ակտիվներ	69,524,404	-	-	55,849	69,580,253
Մարված ակտիվներ	(46,411,704)	(5,201,685)	(2,938,069)	(162,163)	(54,713,621)
Տեղափոխումներ Փուլ 1	1,793,465	(1,610,130)	(183,335)	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(2,887,488)	5,034,918	(2,147,430)	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(2,817,503)	(2,277,724)	5,095,227	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտավորությունների պահուստը ներառում է համբի դեմ ներկայացված որոշակի իրավական պահանջների գծով պահուստ 2,666,591 հազ. ՀՀ դրամ: Ակնկալվում է, որ 2022թ. դեկտեմբերի 31-ի մնացորդը կօգտագործվի մինչև 2023թ. վերջ: Ղեկավարության կարծիքով, որը հիմնված է համապատասխան իրավաբանական խորհրդատվության վրա՝ այս իրավական հայցերի արդյունքում չի առաջանա հաշվեգրված գումարներից ավելի էական վնաս:

Պարտավորությունների գծով պահուստների շարժը հետևյալն է.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ճան.	Ընդամենը
<i>Իրավական հայցապահանջի գծով պահուստ</i>		
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2021թ.		-
Շահույթին կամ վնասին վերագրվող ավելացումներ	30	2,666,591
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.		2,666,591

22 Սեփական կապիտալ

Թողարկված կապիտալ

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համբի բաժնետիրական կապիտալը կազմել է 22,312,000 հազ. ՀՀ դրամ: Հայտարարված, թողարկված և շրջանառվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 22,312,000 սովորական բաժնետոմսերից (2021թ.՝ 22,312,000 սովորական բաժնետոմս), որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 1,000 ՀՀ դրամ (2021թ.՝ 1,000 ՀՀ դրամ):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժիններ և քվեարկել համբի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ի բաժնետերերի ցանկը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում:

Պահուստների բնույթը և նպատակը

Հիմնական միջոցների վերազնահատումից աճ

Հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերազնահատումից աճը ներառում է մինչև հողի, շենքերի և փոխադրամիջոցների ապաճանաչումը կամ արժեզրկումը դրանց կուտակային դրական վերազնահատված արժեքը:

Ներդրումային արժեթղթերի վերազնահատման պահուստ

Ներդրումային արժեթղթերի վերազնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային գուտ փոփոխությունը մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Խմբի չվերահսկող բաժնեմասը

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

2021թ. հունիսին համբի աշխատակիցներն ստացան Բանկի 147,530 սովորական բաժնետոմս «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ից՝ տրամադրման ամսաթվի դրությամբ յուրաքանչյուրը 12,591 ՀՀ դրամ իրական արժեքով, անվճար և առանց որևէ պայմանի:

Գործարքի արդյունքում դուստր ձեռնարկությունում չվերահսկող մասնաբաժինը աճեց մինչև 7.95%, ընկերության մասնաբաժինը նվազեց մինչև 92.05%: Տես Ծանոթագրություն 23:

Դուստր ձեռնարկությունում բաժնեմասնակցության ավելացում

2022 թվականին «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն ձեռք է բերել «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի 6482 սովորական բաժնետոմս՝ 90,785 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Գործարքի արդյունքում դուստր ձեռնարկությունում չվերահսկող բաժնեմասը նվազեց մինչև 16.20%, ընկերության մասնաբաժինը նվազեց մինչև 83.80%:

22 Սեփական կապիտալ (շարունակություն)

Դուստր ձեռնարկությունում բաժնեմասնակցության նվազում

2021 թվականին «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն տեղաբաշխել է 500000 հասարակ բաժնետոմս՝ ընդհանուր 7,500,000 հազ.ՀՀ դրամ արժեքով, 10,000 դրամ անվանական արժեքով և մեկ բաժնետոմսի դիմաց 15,000 դրամ վաճառքի գնով: Գործարքի արդյունքում դուստր ձեռնարկությունում չվերահսկող մասնաբաժինը աճեց մինչև 16.32%, ընկերության մասնաբաժինը նվազեց մինչև 83.68%:

Դուստր ձեռնարկության կողմից վճարված շահաբաժիններ չվերահսկող բաժնեմասի գծով

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի կողմից 2022թ. և 2021թ. չվերահսկող բաժնեմասի գծով վճարված շահաբաժինները կազմել են՝ համապատասխանաբար 537,421 հազ. ՀՀ դրամ և 125,000 հազ. ՀՀ դրամ:

23 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

«ԱԿԲԱ Բանկ» Բաց Բաժնետիրական Ընկերության կապիտալում աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագիր

2021թ. հունիսին «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն և «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ԲԲԸ-ն հայտարարեցին «ԱԿԲԱ Բանկ» Բաց Բաժնետիրական Ընկերության կապիտալում աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագրի մեկնարկի մասին (այսուհետ՝ Ծրագիր)՝ որպես «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ի, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի և «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ԲԲԸ-ի առանցքային և հավատարիմ աշխատակիցների վարձատրման, պարգևատրման, առաջխաղացման, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս:

Ծրագրի շրջանակներում «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ի, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի և «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ԲԲԸ-ի աշխատակիցներին կնվիրաբերի Բանկի 300,000 (երեք հարյուր հազար) սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2021թ. հունիսին Խմբի աշխատակիցներն ստացան Բանկի 147,980 սովորական բաժնետոմս «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ից՝ տրամադրման ամսաթվի դրությամբ յուրաքանչյուրը 12,591 ՀՀ դրամ իրական արժեքով, անվճար և առանց որևէ պայմանի:

Խմբի աշխատակիցներին տրամադրված բաժնետոմսերի ընդհանուր իրական արժեքը՝ 630,938 հազ. ՀՀ դրամ, ճանաչվել է որպես անձնակազմի գծով ծախս՝ 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սեփական կապիտալի համապատասխան աճով (2021 թ.՝ 2,478,295 հազար ՀՀ դրամ):

- Խումբը ներգրավել է անկախ խորհրդատուի բաժնետոմսերի իրական արժեքը գնահատելու համար: Բաժնետոմսերի գնահատման համար օգտագործվել է շահաբաժինների գեղչման մեթոդը, որ ներառում է.
- Ֆինանսական մոդելի ընդհանուր ենթադրությունների և կառուցվածքի որոշում.
- Բանկի և Նրա դուստր ձեռնարկությունների հաշվեկշռի կանխատեսում.
- Բանկի և Նրա դուստր ձեռնարկությունների ֆինանսական արդյունքի կանխատեսում.
- Շահաբաժինների կանխատեսում՝ հաշվի առնելով կապիտալի համարժեքության և իրացվելիության պահանջները.
- Չեղչի դրույքաչափի որոշում;
- Բանկի մնացորդային արժեքի որոշում.
- Ֆինանսական արդյունքների կանխատեսման մեջ չներառված ակտիվների և պարտավորությունների վերլուծություն.
- Բանկի սեփական կապիտալի 100%-ի հաշվարկ:

Չեղչման դրույքը որոշվել է համանման բանկի բաժնային գործիքներից պահանջվող եկամտաբերության դրույքի հիման վրա:

24 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Գործառնական միջավայր

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղեկավարությունը կարծում է, որ ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ աջակցելու իմքի բիզնեսի կայունությանը ներկա պայմաններում:

Իրավական միջավայր

Իր բնականոն գործունեության ընթացքում իմքի դեմ կարող են հարուցվել դատական հայցեր և պահանջներ: Ղեկավարության համոզմամբ նման հայցերի և պահանջների արդյունքում ծագող հնարավոր պարտավորությունները (առկայության դեպքում) էական բացասական ազդեցություն չեն ունենա իմքի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության արդյունքների վրա:

Հարկային միջավայր

ՀՀ-ում հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնութագրվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն անորոշ են, հակասական և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: արկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր, տուգանքներ և տուկոսային վճարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմինների կողմից լրացուցիչ հարկերի, տուգանքների կամ տուգանքների գծով պարտավորություններ չեն կարող առաջադրվել, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները կարող են ՀՀ-ում ստեղծել ավելի էական հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը կարծում է, որ հարկային պարտավորությունները կատարվել են պատշաճ կերպով՝ հիմնվելով Հայաստանի գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը, եթե իշխանությունները հաջողությամբ իրականացնեն իրենց մեկնաբանությունները, կարող էր զգալի լինել:

Ղեկտեմբերի 31-ի դրությամբ իմքի պայմանական և պայմանագրային պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2022թ.	2021թ.
Վարկային պարտավորություններ		
Վարկերի և վարկային գծերի պարտավորություններ	14,750,201	13,916,868
Վարկային քարտերի գծով պարտավորություններ	15,908,017	14,984,639
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	23,887,159	14,130,722
Պայմանական դեպքեր և պարտավորություններ	54,545,377	43,032,229

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

24 Պայմանական դեպքեր և պարտավորություններ (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի գծով պարտավորություններ

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ-ները 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	202,626	1,407	6,212	210,245
Նոր ակտիվներ	43,757	-	-	43,757
Ժամկետանց ակտիվներ	(78,279)	(2,056)	(3,759)	(84,094)
Տեղափոխումներ Փուլ 1	692	(692)	-	-
Տեղափոխումներ Փուլ 2	(789)	789	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(1,185)	(43)	1,228	-
Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	(599)	256	1,085	742
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(72,952)	(478)	(114)	(73,544)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(3,990)	(88)	(169)	(4,247)
31 դեկտեմբերի 2022թ.	89,281	(905)	4,483	92,859

Երաշխիքներ և ակրեդիտիվներ

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Ընդամենը
ԱՎԿ-ները 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	1,171	1,171
Նոր ակտիվներ	1,846	1,846
Ժամկետանց ակտիվներ	(1,120)	(1,120)
Օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	18	18
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(11)	(11)
31 դեկտեմբերի 2022թ.	1,904	1,904

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Վարկերի, վարկային գծերի և վարկային քարտերի գծով պարտավորություններ

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2021թ.	389,008	2,590	5,061	396,659
Նոր ակտիվներ	67,060	-	-	67,060
Ժամկետանց ակտիվներ	(113,009)	(1,782)	(2,787)	(117,578)
Տեղափոխումներ Փուլ 1	465	(419)	(46)	-
Տեղափոխումներ Փուլ 2	(273)	273	-	-
Տեղափոխումներ Փուլ 3	(2,794)	(178)	2,972	-
Ժամանակահատվածի ընթացքում փուլերի միջև փոխանցված բացահայտումների ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի ԱՎԿ-ի վրա	(391)	1,316	1,168	2,093
ԱՎԿ հաշվարկների համար օգտագործված մոդելների և ելակետային տվյալների փոփոխություններ	(128,350)	(192)	60	(128,482)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(9,090)	(201)	(216)	(9,507)
31 դեկտեմբերի 2021թ.	202,626	1,407	6,212	210,245

24 Պայմանական դեպքեր և պարտավորություններ (շարունակություն)

Երաշխիքներ և ակրեդիտիվներ

Հազ. ՀՀ դրամ	Փուլ 1	Ընդամենը
ԱՎԿ առ 1 հունվարի 2021թ.	745	745
Նոր ակտիվներ	1,154	1,154
Ժամկետանց ակտիվներ	(728)	(728)
31 դեկտեմբերի 2021թ.	1,171	1,171

25 Չուտ տոկոսային եկամուտ

Չուտ տոկոսային եկամուտը ներառում է.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ. (վերաներկայացված)
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր	50,140,816	42,872,551
Հակադարձ հետզնման պայմանագրերով ստացվելիք գումարներ	281,069	598,700
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	165,688	193,600
Այլ	1,460	86,340
	50,589,033	43,751,191
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Պարտքային գործիքներ	1,317,522	1,333,388
Տոկոսային հասույթ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	51,906,555	45,084,579
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	5,722,526	3,048,611
Այլ տոկոսային եկամուտ	130,240	476,102
Այլ տոկոսային հասույթ	5,852,766	3,524,713
Ընդամենը տոկոսային եկամուտ	57,759,321	48,609,292
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	15,565,133	12,921,770
Այլ փոխառու միջոցներ և ստորադաս փոխառություններ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	7,169,520	7,340,858
Հետզնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ	475,780	261,868
Թողարկված պարտքային արժեթղթեր	252,100	181,868
Այլ	673,756	268,359
Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային ծախս	24,136,289	20,974,723
Վարձակալության գծով պարտավորություններ	107,690	110,963
Տոկոսային ծախս	24,243,979	21,085,686
Չուտ տոկոսային եկամուտ	33,515,342	27,523,606

Այս բացահայտման տեղեկատվությունը վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3):

26 Միջնորդավճարների գծով եկամուտ, զուտ

Զուտ միջնորդավճարները ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Պլաստիկ քարտերի սպասարկում	6,031,224	3,853,604
Դրամական փոխանցումներ	1,404,119	668,611
Կանխիկացման ծառայություններ	731,665	262,213
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	568,406	436,782
Բանկային հաշիվների սպասարկման վճարներ	281,068	442,752
Միջնորդավճարներ վարձակալության սարքավորումների մատակարարներից	148,649	228,322
Միջնորդավճարներ՝ որպես ապահովագրական գործակալ հանդես գալու գծով	225,424	135,167
Այլ	312,903	267,108
Միջնորդավճարների գծով եկամուտ	9,703,458	6,294,559
Պլաստիկ քարտերի սպասարկում	3,093,747	2,319,495
Դրամական փոխանցումներ	316,813	64,341
Այլ	241,179	126,718
Միջնորդավճարների գծով ծախս	3,651,739	2,510,554
Միջնորդավճարների գծով եկամուտ, զուտ	6,051,719	3,784,005

27 Այլ եկամուտ

	2022թ.	2021թ. (վերաներկայացված)
Հազ. ՀՀ դրամ		
Հողի և շենքերի վերագնահատումից օգուտ	1,212,817	527,612
Այլ	234,183	356,008
Ընդամենը այլ եկամուտ	1,447,000	883,620

Այս բացահայտման տեղեկատվությունը վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3):

28 Այլ գործառնական ծախսեր

Գործառնական այլ ծախսերը ներառում են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	485,210	448,438
Վարկի հավաքագրման գծով ծախսեր	367,100	363,975
Շահութահարկից բացի այլ հարկեր	342,734	301,414
Ինկասացիոն ծախսեր	232,930	173,831
Հիմնական միջոցների օտարումից վնաս	150,469	112,292
Ֆինանսական համակարգի հաշտարարի վճարումներ	78,848	70,117
Անդամակցության վճարներ	45,480	61,272
Արժեթղթերի ռեեստրի վարման վճար	13,288	15,016
Վճարված տույժեր և տուգանքներ	8,433	27,163
Այլ	721,903	437,601
Այլ գործառնական ծախսեր	2,446,395	2,011,119

29 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Գովազդային և մարքեթինգային ծառայություններ	876,962	1,073,077
Վերանորոգում և սպասարկում	854,530	678,502
Ծրային ապահովման սպասարկման ծախս	484,258	653,309
Կապ	358,974	361,510
Անվտանգություն	303,442	279,454
Կոմունալ ծառայություններ և գրասենյակային պարագաներ	254,693	193,222
Ապահովագրություն	191,136	153,154
Ներկայացուցչական ծախսեր	182,632	168,424
Գործառնական վարձակալության գծով ծախս	58,671	32,240
Այլ	490,596	430,561
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	4,055,894	4,023,453

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար խումբը ճանաչել է 6,381 հազ. ՀՀ դրամ կարճաժամկետ վարձակալության և 52,290 հազ. ՀՀ դրամ ցածրարժեք ակտիվների վարձակալության գծով ծախսեր (2021թ.՝ 7,617 հազ. ՀՀ դրամ կարճաժամկետ վարձակալության գծով ծախս և 28,442 հազ. ՀՀ դրամ՝ ցածրարժեք ակտիվների վարձակալության գծով ծախս):

30 Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Պարտավորությունների պահուստի գծով ծախս (Ծան.21)	2,666,591	-
Ոչ կյուբական ակտիվների արժեզրկման գծով ծախս	591,800	-
Բռնագանձված ակտիվների արժեզրկման գծով ծախս	24,994	95,529
Այլ արժեզրկման և պահուստների գծով ծախս	3,283,385	95,529

31 Ռիսկերի կառավարում

Ներածություն

Ռիսկը բնորոշ է իմքի գործունեությանը, սակայն այն կառավարվում է ռիսկերի շարունակական հայտնաբերման, չափման և մոնիթորինգի գործընթացների միջոցով, որոնք ենթակա են ռիսկերի սահմանաչափերին և մշտական վերահսկողության: Ռիսկերի կառավարման այս գործընթացը առանցքային է իմքի եկամտաբերության հաստատուն մակարդակի պահպանման համար, և իմքի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների շրջանակում ի հայտ եկող ռիսկերի համար: Խումբը ենթարկվում է վարկային, իրացվելիության և շուկայական ռիսկերի, որոնք իրենց հերթին բաժանվում են առևտրային և ոչ առևտրային ռիսկերի: Խումբը ենթակա է նաև գործառնական ռիսկերի:

Բիզնեսի ռիսկերը, ինչպիսիք են շրջակա միջավայրի, տեխնոլոգիական և ոլորտային փոփոխությունները, նույնպես ներառված են ռիսկերի կառավարման գործառնության շրջանակներում՝ համապատասխան տարբեր ստորաբաժանումների ներգրավմամբ:

Ռիսկերի կառավարման կառուցվածքը

Ռիսկերի հայտնաբերման և վերահսկման հիմնական պատասխանատվությունը կրում է Տնօրենների խորհուրդը, սակայն առկա են առանձին անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար:

Վարչությունը

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ընդհանուր ռիսկերի կառավարման քաղաքականության, ռիսկերի կառավարման ռազմավարության և սկզբունքների հաստատման համար:

Գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում իմքում ռիսկերի ընդհանուր գործընթացը վերահսկելու և կառավարելու համար:

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարման հանձնաժողով

Ռիսկերի կառավարման հանձնաժողովն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի ռազմավարության մշակման և իրականացման սկզբունքների, շրջանակների, քաղաքականության և սահմանաչափերի մշակման համար: Այն պատասխանատու է ռիսկերի հիմնարար խնդիրների համար և կառավարում ու վերահսկում է ռիսկերի հետ կապված համապատասխան որոշումները:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բոլոր տեսակի ռիսկերի սահմանման, գնահատման, վերահսկողության և կառավարման համար: Անկախ վերահսկման գործընթաց ապահովելու համար, յուրաքանչյուր քայլից հետո ներկայացվում է հաշվետվություն:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժին

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը պատասխանատու է հմբի ակտիվների և պարտավորությունների և ընդհանուր ֆինանսական կառուցվածքի կառավարման համար: Այն նաև գլխավորապես պատասխանատու է հմբի ֆինանսավորման և իրացվելիության ռիսկերի համար:

Ներքին աուդիտ

Հմբի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ հմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի ստորաբաժանումը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ներքին Աուդիտի հանձնաժողովին:

Ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգեր

Տարբեր ռիսկերի վերլուծության և գնահատման ժամանակ խումբն ընդունում է անհատական մոտեցում՝ կիրառելով վիճակագրական մոդելներ, զգայունության վերլուծություններ, ինչպես նաև վերլուծելով տարբեր ռիսկային ցուցանիշների դիմամիկան և անհրաժեշտության դեպքում ձեռնարկելով համապատասխան միջոցներ: Մոդելները հետազայում փորձարկվում են վավերականության ստուգման նպատակով: Խումբը նաև կիրառում է վատագույն դեպքի սցենարներ, որոնք կառաջանան այն դեպքում, երբ ծայրահեղ դեպքերը, որոնք քիչ հավանական է, որ տեղի կունենան, փաստացի տեղի են ունենում:

Ռիսկերի դիտարկումը և վերահսկումը հիմնականում իրականացվում է հմբի կողմից հաստատված սահմանաչափերի հիման վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են հմբի գործարար ռազմավարությունը և շուկայական միջավայրը, ինչպես նաև այն ռիսկի մակարդակը, որը խումբը պատրաստ է ընդունել՝ լրացուցիչ շեշտադրելով տնտեսության ընտրված ոլորտները: Բացի այդ, խումբը դիտարկում և գնահատում է ընդհանուր ռիսկին ենթարկվելու առավելագույն մակարդակը բոլոր տեսակի ռիսկերի և գործունեությունների գծով:

Բոլոր բիզնես ուղղություններին վերաբերող վարկային ռիսկի մասին տեղեկատվությունը ուսումնասիրվում է մշակվում է ռիսկերը վերլուծելու, վերահսկելու և վաղ հայտնաբերելու համար: հաշվետվություն, ինչը ներառում է անհրաժեշտ ամբողջական տեղեկատվություն հմբի ընդհանուր ռիսկերը գնահատելու և դրանց մասին եզրակացություն կազմելու համար: Այս տեղեկատվությունը ներկայացվում և բացատրվում է Գլխավոր գործադիր տնօրենին, Ռիսկերի կառավարման հանձնաժողովին և բոլոր բիզնես ստորաբաժանումների ղեկավարներին: Ռիսկերի կառավարման հանձնաժողովին ներկայացված հաշվետվությունը ներառում է ընդհանուր վարկային ռիսկին ենթարկվածության վերլուծություն, վարկերի համակենտրոնացման սահմանաչափերի դիտարկման արդյունքները, ճեղքվածքների (GAP) վերլուծություն, VaR գնահատում, իրացվելիության գործակիցներ և նպատակային ցուցանիշների վերլուծություն, սթրես թեստ վերլուծություն, ընդհանուր ռիսկի ախորժակի վերահսկում և ռիսկերի պրոֆիլի փոփոխությունները: Եռամսյակային կտրվածքով կազմակերպվում է ոլորտային, հաճախորդների և բիզնեսի ռիսկերի մանրամասն զեկուցում:

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարման հանձնաժողովը քննարկում է ռիսկերի հետ կապված էական խնդիրները և հաստատում քայլերը՝ ուղղված դրանց նվազեցմանը և կառավարմանը: Խորհուրդը եռամսյակը մեկ ստանում է ռիսկերի համապարփակ հաշվետվություն, ինչը ներառում է անհրաժեշտ ամբողջական տեղեկատվություն խմբի ընդհանուր ռիսկերը գնահատելու և դրանց մասին եզրակացություն կազմելու համար:

Խմբի բոլոր մակարդակների համար հատուկ հարմարեցված ռիսկերի հաշվետվություններ են պատրաստվում և ներկայացվում, որպեսզի բոլոր բիզնես ստորաբաժանումները ապահովված լինեն լիարժեք, անհրաժեշտ և արդի տեղեկատվությամբ:

Ռիսկերի սահմանաչափերի խախտման դեպքում օրական ահազանգներ են ուղարկվում խմբի համապատասխան ստորաբաժանումներին, ինչպես նաև Գլխավոր գործադիր տնօրենին, և քննարկվում ու կիրառվում են համապատասխան միջոցներ:

Ռիսկերի նվազեցում

Որպես իր ընդհանուր ռիսկերի կառավարման մաս, Խումբն օգտագործում է ածանցյալ գործիքներ և այլ գործիքներ՝ տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից առաջացող ռիսկը, կապիտալի և վարկային ռիսկերը, ինչպես նաև կանխատեսվող գործարքներից առաջացող ռիսկերը կառավարելու համար:

Խումբը լայնորեն օգտագործում է գրավ՝ վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով:

Ռիսկերի գերկենտրոնացում

Ռիսկի համակենտրոնացումը ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են համանման գործունեություն, կամ երբ գործունեությունը վարում են մեկ աշխարհագրական տարածաշրջանում, կամ երբ գտնվում են համանման տնտեսական գործոնների ազդեցության ներքո, որոնց հետևանքով իրենց պարտավորությունների կատարումը նմանապես է արձագանքում տնտեսական, քաղաքական և այլ պայմանների փոփոխությանը: Ռիսկի համակենտրոնացումները արտացոլում են խմբի գործունեության արդյունքների համեմատական զգայունությունն այն պայմանների նկատմամբ, որոնք ազդում են որոշակի ոլորտի կամ աշխարհագրական տարածաշրջանի վրա:

Ռիսկի գերկենտրոնացումից խուսափելու նպատակով խմբի քաղաքականությունը և ընթացակարգերը ներառում են յուրաքանչյուր սկզբունքներ, որոնք ուղղված են առավելագույն կերպով դիվերսիֆիկացված պորտֆելի ապահովմանը: Վարկային ռիսկերի հայտնաբերված համակենտրոնացումները համապատասխանաբար վերահսկվում և կառավարվում են :

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է կրել վնաս, հաճախորդների կամ գործընկերների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում: Խումբը իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում՝ սահմանելով ռիսկի այն սահմանաչափը, որը պատրաստ է ընդունել անհատական գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական համակենտրոնացումների համար, ինչպես նաև դիտարկելով զգայունությունը նման սահմանաչափերի նկատմամբ:

Խումբը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Վարկերի որակի ստուգման գործընթացը Խմբին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային բնույթի պարտավորությունների հետ կապված ռիսկեր

Խուճբը իր հաճախորդներին ընձեռում է երաշխիքների և ակրեդիտիվների ստացման հնարավորություն, որոնց գծով հսկի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները վճարումները կատարում են պայմանագրերում ամրագրված պայմանների համաձայն: Խուճբը կրում է ռիսկեր, որոնք համարվում են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

Վարկային ռիսկի առավելագույն չափը ֆինանսական գործիքների գծով

Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, գտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից: Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություններ 10-ում և 11-ում:

Արժեզրկման գնահատում

Խուճբը ԱՎԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՎԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

PD	Դեֆոլտի հավանականությունը որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
EAD	Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:
LGD	Դեֆոլտի դեպքում կորստի չափը դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Այն հիմնված է պայմանագրային հիմունքով վճարման ենթակա դրամական միջոցների և վարկատուի կողմից ստացման ակնկալվող, ներառյալ գրավի միջոցով՝ դրամական միջոցների միջև տարբերության վրա: Այն սովորաբար արտահայտվում է որպես EAD-ի տոկոս:

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային կորուստ կամ ԱՎԱՎԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային կորուստի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ն ԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱՎԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Խուճբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը:

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ելնելով վերը նշված գործընթացից՝ Խումբը իր վարկերը խմբավորում է Փուլ 1, Փուլ 2, Փուլ 3 և POCI, ինչպես նկարագրված է ստորև.

- Փուլ 1. Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:
- Փուլ 2. Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:
- Փուլ 3. Վարկերը համարվում են արժեզրկված:
- POCI. Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

Դեֆոլտի սահմանումը

Խումբը ֆինանսական գործիքը համարում է դեֆոլտի ենթարկված և, հետևաբար, Փուլ 3 (վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՊԿ-ի հաշվարկների համար բոլոր այն դեպքերում, երբ.

- վարկառուի պայմանագրային վճարումների գծով ավելի քան 90 օր կետանցը.
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե դրանցից առնվազն մեկը Բանկում և/կամ այլ ֆինանսական կազմակերպություններում 90 օրից ավելի ժամկետանց է (ներառյալ ֆիզիկական անձի և անհատ ձեռնարկատիրոջ պատկանելությունը).
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե փոխկապակցված անձանց պարտավորություններից առնվազն մեկը Բանկում 90 օրից ավելի ժամկետանց է.
- վարկառուի անբարենպաստ ֆինանսական վիճակի պատճառով վերաֆինանսավորված կամ վերանայված ակտիվներ, որոնք Բանկում ավելի քան 30 օր ժամկետանց են:
- տվյալ վարկառուի բոլոր պարտավորությունները, եթե դրանցից առնվազն մեկը Բանկում ենթակա է վերաֆինանսավորման կամ վերանայման, և որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Խումբը բանկերում տեղաբաշխված գումարները համարում է դեֆոլտի ենթարկված և անմիջապես ձեռնարկում է քայլեր, եթե գործընկերը հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ չի վճարել հաշվեգրված տոկոսների (արժեկտրոնի) և/կամ վարկի մայր գումարը ավելի քան 15 աշխատանքային օր:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են.

- փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը,
- վերանայման կարգավիճակը,
- ֆինանսական մոնիտորինգի արդյունքները, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:
- վարկի ապահովման նվազեցում՝ գրավատուի կողմից գրավի լրիվ կամ մասնակի կորստի, ֆիզիկական վնասի կամ ապօրինի վաճառքի կամ շուկայական արժեքի նվազման պատճառով վարկի ապահովության գործակցի նվազման հետևանքով.
- վարկերի կենտրոնացումը այլ անձանց, ներառյալ կենտրոնացումը ընտանիքի անդամների շրջանում վարկառուի կողմից վարկերի մարումից հրաժարվելը և 30-ից ավելի ժամկետանց օրերի առկայությունը. Այս չափանիշը վերաբերվում է բոլոր վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը.
- ֆորս-մաժորային հանգամանքները՝ վարկառուի կամ միակ սեփականատիրոջ մահը, հաշմանդամությունը, ծանր հիվանդությունները: Այս չափանիշը կիրառվում է հաճախորդի բոլոր վարկերի նկատմամբ, և
- բնական աղետներ կամ համաճարակներ. Այս չափանիշը վերագրվում է բոլոր այն վարկերին, որոնց նկատմամբ կիրառվում է մոնիտորինգի եզրակացությունը:

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում հստակ նաև դիտարկում է մի շարք դեպքեր, որոնք կարող են վկայել վճարելու անհավանականության մասին՝ հիմնվելով ղեկավարության դատողության վրա: Երբ նման իրադարձություններ են տեղի ունենում, հստակ դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը պետք է հանգեցնի նրան, որ հաճախորդը պետք է դիտարկվի որպես չկատարված և հետևաբար գնահատվի որպես Փուլ 3 ԱՎԿ-ի հաշվարկների համար, թե արդյոք 2-րդ փուլը տեղին է:

Խմբի քաղաքականությունն է ֆինանսական գործիքը դիտարկել որպես «վերականգնված» և, հետևաբար, վերադասակարգմամբ դուրս բերել 3-րդ փուլից, երբ դեֆոլտի չափանիշներից ոչ մեկը գոյություն չունի առնվազն վեց ամիս անընդմեջ: Ակտիվի վերականգնումից հետո այն 2-րդ կամ 1-ին փուլ դասակարգելու որոշումը կախված է վարկառուի կողմից պարտքի սպասարկման օրինաչափությունից և գնահատման ամսաթվի դրությամբ այլ ոչ առաջնային ՎՈՒԱ (SICR) չափանիշների առկայությունից:

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը

Գանձապետական և միջբանկային հարաբերություններ

Խմբի գանձապետական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Խմբի ֆինանսական ռիսկերի կառավարման բաժինը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկեր

Խմբավորում

Հաճախորդներին տրված վարկերի, որոնք պատկանում են Փուլ 1-ին և Փուլ 2-ին, ինչպես նաև անհատապես ոչ Եական Փուլ 3-ին պատկանող վարկերի համար, հստակ հաշվարկում է ԱՎԿ պորտֆելի մակարդակով: Խումբն առանձնացնում է պորտֆելների հետևյալ տեսակները. Հետևյալ պորտֆելները առանձնացված են Բանկի կողմից, որոնք հետագայում բաժանվում են ավելի փոքր թիրախային խմբերի՝ դեֆոլտի հավանականության PIT մատրիցների գնահատման նպատակով:

- Կորպորատիվ վարկեր,
- Սպառողական վարկեր,
- Գյուղատնտեսական վարկեր,
- Հիփոթեքային վարկեր,
- Այլ (վարկային քարտեր և ոսկու գրավադրմամբ վարկեր):

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցաներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում դեֆոլտ կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս հստակ դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն Եական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության: Դեֆոլտի հավանականության կանխատեսումները գնահատվում են՝ հիմնվելով պաշտոնապես հասանելի հեռանկարային մակրոտնտեսական պարամետրերի վրա: Ժամանակային շարքի ռեգրեսիոն վերլուծությունը գնահատվում է հետևյալ ոլորտներով՝ գյուղատնտեսություն, բիզնես, սպառողական և հիփոթեքային վարկեր, որոնց արդյունքն այնուհետև աստիճանական իջեցվում է մինչև վարկերի կանխորոշված ենթախմբեր՝ հասնելու դեֆոլտի հավանականության PIT անցումային մատրիցներին:

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հիմք ընդունելով մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատման շեղումները փաստացի միտումներից՝ մակրոտնտեսական զարգացման երեք սցենարները ուղղված են երեք դեֆոլտի հավանականության PIT մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% և 15% հավանականություններով՝ լավագույն, բազային և վատագույն սցենարներին համապատասխան:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը առաջիկա դեֆոլտի դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար խումբը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամսվա հաշվարկելու նպատակով: Փուլ 2-ին, Փուլ 3-ին և POCI դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

Դեֆոլտի ժամանակ կորստի չափը

Խումբը դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու համար PD PIT-ի գնահատման համար օգտագործվող նախնական խմբավորումը հետագայում ենթարկվում է ենթախմբավորման՝ ըստ գրավի տեսակի: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո՝ ըստ LGD խմբերի: Ժամանակային կտրվածքով վերջին ժամկետանց վարկերի համար հնարավոր վերադարձի հավանականությունը գնահատվում է նախկինում ժամկետանց վարկերի պոպուլյացիայի զարգացման գործակցով: Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

Վարկային ռիսկի զգալի աճ

Խումբը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: :: Խմբի կողմից օգտագործվող օբյեկտիվ չափանիշը վարկերի ժամկետանց օրերի մասին տեղեկատվությունն է: Խումբը եզրակացնում է, որ կա ակտիվների վարկային ռիսկի զգալի աճ, երբ փոխառուի այդ ակտիվների հետ կապված վճարումները ժամկետանց են ավելի քան 30 օրով:

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Խմբի ղեկավարությունը նաև հաշվի է առնում հետևյալ գործոնները՝ վարկային ռիսկի աճը որոշելու համար.

- Հայաստանի այլ ֆինանսական հաստատություններում վարկառուի ժամկետանց օրերը.
- Նախասահմանված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերը.
- Վարկառուի ֆինանսական պայմաններում զգալի դժվարությունները.
- Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով առաջացած վարկի պայմանների վերանայումը.
- Վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքը.

Կանխատեսումային տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Խումբը հիմնվում է կանխատեսումային տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

2022թ.

- Արդյունաբերական արտադրության տարեկան աճ.
- Սպառողական գների գնաճ.
- Ներմուծման տարեկան աճ.
- Ծառայությունների տարեկան աճ.
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջին
- Գյուղատնտեսական արտադրություն տարեկան աճ:
- ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ/ավելցուկ.
- M2 դրամական պաշարների աճ.

2021թ.

- ՀՆԱ տարեկան աճ.
- Արդյունաբերական արտադրության տարեկան աճ.
- Սպառողական գների գնաճ.
- Ապրանքների արտահանման ծավալ.
- Ապրանքների ներմուծման ծավալ.
- Ծառայությունների տարեկան աճ.
- Ընդհանուր բանկային վարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ում;
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջ

Խումբը կանխատեսումային տեղեկատվությունը ստանում է երրորդ կողմի աղբյուրներից (Տնտեսական հետախուզության գրասենյակ և Համաշխարհային բանկի տվյալների բազա, ինչպես նաև ՀՀ կառավարության կանխատեսումներ): 15%, 70% և 15% հավանականությունները վերագրվում են համապատասխան սցենարներից յուրաքանչյուրին՝ լավատեսական, բազային և հոռետեսական սցենարներին:

Աղյուսակները ցույց են տալիս 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները:

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հիմնական ցուցանիշներ	ԱՎԿ սցենար	Վերագրված հավանականություն, %	2023թ.	2024թ.	2025թ.
Արդյունաբերական արտադրության տարեկան աճ, %	Լավատեսական	15%	9.92%	9.01%	7.81%
	Ելակետային	70%	5.70%	5.90%	5.20%
	Հոռետեսական	15%	1.48%	2.79%	2.59%
Սպառողական գների գնաճ, % (cum)	Լավատեսական	15%	1.60%	1.29%	1.02%
	Ելակետային	70%	3.90%	4.00%	4.00%
	Հոռետեսական	15%	6.20%	6.71%	6.98%
Ներմուծման տարեկան աճ, %	Լավատեսական	15%	5.56%	7.51%	8.40%
	Ելակետային	70%	1.80%	3.30%	3.90%
	Հոռետեսական	15%	-1.96%	-0.91%	-0.60%
Ծառայությունների տարեկան աճ, %	Լավատեսական	15%	7.76%	8.11%	8.50%
	Ելակետային	70%	4.00%	3.90%	4.00%
	Հոռետեսական	15%	0.24%	-0.31%	-0.50%
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջին	Լավատեսական	15%	427.12	407.58	383.29
	Ելակետային	70%	446.30	447.60	443.70
	Հոռետեսական	15%	465.48	489.49	510.13
Գյուղատնտեսական արտադրություն տարեկան աճ, %	Լավատեսական	15%	8.36%	8.61%	8.70%
	Ելակետային	70%	1.40%	1.80%	2.70%
	Հոռետեսական	15%	0.84%	0.19%	-0.30%
ՀՀ պետական բյուջե, դեֆիցիտ (-) / ավելցուկ (+), մլն. ՀՀ դրամ	Լավատեսական	15%	(116,679)	(78,440)	(17,090)
	Ելակետային	70%	(292,200)	(273,300)	(225,567)
	Հոռետեսական	15%	(467,721)	(468,160)	(434,043)
M2 դրամական պաշարների աճ, %	Լավատեսական	15%	18.73%	13.28%	13.43%
	Ելակետային	70%	14.90%	9.20%	9.20%
	Հոռետեսական	15%	11.07%	5.12%	4.97%

Աղյուսակները ցույց են տալիս 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՎԿ հաշվարկների համար օգտագործվող տնտեսական սցենարներից յուրաքանչյուրում օգտագործված հիմնական կանխատեսումային տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները:

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հիմնական ցուցանիշներ	ԱՎԿ սցենար	Վերագրված հավանականություն, %	2022թ.	2023թ.	2024թ.
ՀՆԱ տարեկան աճ, %					
	Լավատեսական	15%	9.20%	8.13%	8.70%
	Ելակետային	70%	5.30%	4.00%	4.40%
	Հոռետեսական	15%	1.40%	-0.13%	0.10%
Արդյունաբերական արտադրություն տարեկան աճ, %					
	Լավատեսական	15%	9.37%	7.50%	7.67%
	Ելակետային	70%	5.50%	3.40%	3.40%
	Հոռետեսական	15%	1.63%	-0.70%	-0.87%
Սպառողական գների գնաճ, % (cum)					
	Լավատեսական	15%	2.89%	1.82%	0.90%
	Ելակետային	70%	5.50%	4.70%	4.00%
	Հոռետեսական	15%	8.11%	7.58%	7.10%
Ապրանքների արտահանման ծավալը, հազ.ԱՄՆ դոլար					
	Լավատեսական	15%	3,805,178	4,422,900	4,522,087
	Ելակետային	70%	3,548,750	3,846,845	3,648,115
	Հոռետեսական	15%	3,292,322	3,310,965	2,894,623
Ապրանքների ներմուծման ծավալ, հազ. ԱՄՆ դոլար					
	Լավատեսական	15%	6,496,801	7,630,110	8,253,480
	Ելակետային	70%	5,918,000	6,326,000	6,190,000
	Հոռետեսական	15%	5,339,199	5,144,016	4,502,578
Ծառայությունների տարեկան աճ, %					
	Լավատեսական	15%	8.51%	10.57%	11.31%
	Ելակետային	70%	4.90%	5.20%	5.90%
	Հոռետեսական	15%	1.29%	-0.17%	0.13%
Ընդհանուր բանկային վարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ում, %					
	Լավատեսական	15%	61.59%	65.70%	71.76%
	Ելակետային	70%	60.05%	62.48%	64.55%
	Հոռետեսական	15%	57.52%	56.50%	54.68%
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք, տարեվերջին					
	Լավատեսական	15%	457.72	441.20	424.26
	Ելակետային	70%	476.44	479.84	483.74
	Հոռետեսական	15%	495.16	520.10	548.53

Վարկի որակը ֆինանսական ակտիվների դասի համար

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է տեղեկատվություն իրավաբանական և ֆիզիկական անձանց զուտ վարկերի և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի վերաբերյալ 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

2022թ. Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Բարձր դաս	Ստանդարտ դաս	Ենթաստ անդարտ դաս	Արժե- գրկված	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	10					
- Կորպորատիվ վարկեր		Փուլ 1	-	136,903,499	-	136,903,499
		Փուլ 2	-	-	4,426,855	4,426,855
		Փուլ 3	-	-	3,395,604	3,395,604
		POCI	-	-	21,311	21,311
- Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	-	104,516,713	-	104,516,713
		Փուլ 2	-	-	1,368,169	1,368,169
		Փուլ 3	-	-	1,880,967	1,880,967
- Սպառողական վարկեր		Փուլ 1	2,114,998	93,362,575	-	95,477,573
		Փուլ 2	-	-	1,995,818	1,995,818
		Փուլ 3	-	-	2,307,086	2,307,086
- Վարկային քարտեր		Փուլ 1	712,319	10,458,618	-	11,170,937
		Փուլ 2	-	-	218,235	218,235
		Փուլ 3	-	-	429,087	429,087
- Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	-	40,897,873	-	40,897,873
		Փուլ 2	-	-	654,365	654,365
		Փուլ 3	-	-	622,267	622,267
		POCI	-	-	32,303	32,303
- Ոսկու գրավադրմամբ վարկեր		Փուլ 3	-	-	135	135
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	11	Փուլ 1	-	52,353,433	-	52,353,433
		Փուլ 2	-	-	762,854	762,854
		Փուլ 3	-	-	306,934	306,934
Ընդամենը			2,827,317	438,492,711	9,426,296	459,742,018
2021թ. Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Բարձր դաս	Ստանդարտ դաս	Ենթաստ անդարտ դաս	Արժե- գրկված	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	10					
- Կորպորատիվ վարկեր		Փուլ 1	446,110	103,200,193	-	103,646,303
		Փուլ 2	-	-	9,427,578	9,427,578
		Փուլ 3	-	-	4,680,896	4,680,896
		POCI	-	-	101,096	101,096
- Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	1,166,512	99,438,028	-	100,604,540
		Փուլ 2	-	-	2,462,054	2,462,054
		Փուլ 3	-	-	2,777,936	2,777,936
- Սպառողական վարկեր		Փուլ 1	104,915	67,768,522	-	67,873,437
		Փուլ 2	-	-	2,683,211	2,683,211
		Փուլ 3	-	-	2,943,491	2,943,491
- Վարկային քարտեր		Փուլ 1	173,944	9,769,101	-	9,943,045
		Փուլ 2	-	-	356,165	356,165
		Փուլ 3	-	-	562,613	562,613
- Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	7,797,703	23,114,459	-	30,912,162
		Փուլ 2	-	-	1,011,131	1,011,131
		Փուլ 3	-	-	498,705	498,705
		POCI	-	-	33,143	33,143
- Ոսկու գրավադրմամբ վարկեր		Փուլ 1	-	6,330	-	6,330
		Փուլ 2	-	-	771	771
		Փուլ 3	-	-	3,758	3,758
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	11	Փուլ 1	-	29,753,092	-	29,753,092
		Փուլ 2	-	-	1,100,284	1,100,284
		Փուլ 3	-	-	379,691	379,691
Ընդամենը			9,689,184	333,049,725	17,041,194	371,761,432

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակները ներկայացնում են հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի միջին PD-ները՝ ըստ ելակետային սցենարի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2022թ.	Դաս	Միջին PD
Կորպորատիվ վարկավորում	Ստանդարտ	1.2%
	Ենթաստանդարտ	5.2%
	Արժեզրկված	100.0%
Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	1.2%
	Ենթաստանդարտ	5.5%
	Արժեզրկված	100.0%
Սպառողական վարկեր	Ստանդարտ	1.8%
	Ենթաստանդարտ	12.9%
	Արժեզրկված	100.0%
Վարկային քարտեր	Ստանդարտ	1.4%
	Ենթաստանդարտ	10.1%
	Արժեզրկված	100.0%
Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	0.3%
	Ենթաստանդարտ	8.4%
	Արժեզրկված	100.0%
Ոսկու գրավով վարկեր	Ստանդարտ	-
	Ենթաստանդարտ	-
	Արժեզրկված	100.0%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	1.3%
	Ենթաստանդարտ	6.7%
	Արժեզրկված	100.0%
2021թ.	Դաս	Միջին PD
Կորպորատիվ վարկավորում	Ստանդարտ	0.96%
	Ենթաստանդարտ	4.68%
	Արժեզրկված	100%
Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	1.89%
	Ենթաստանդարտ	6.29%
	Արժեզրկված	100%
Սպառողական վարկեր	Ստանդարտ	3.88%
	Ենթաստանդարտ	16.77%
	Արժեզրկված	100%
Վարկային քարտեր	Ստանդարտ	3.34%
	Ենթաստանդարտ	10.52%
	Արժեզրկված	100%
Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	1.42%
	Ենթաստանդարտ	13.36%
	Արժեզրկված	100%
Ոսկու գրավադրմամբ վարկեր	Ստանդարտ	0.64%
	Ենթաստանդարտ	0.64%
	Արժեզրկված	100%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	0.76%
	Ենթաստանդարտ	4.74%
	Արժեզրկված	100%

Բարձր դասի գործիքները ներառում են դրամական միջոցներով ապահովված՝ հաճախորդներին տրամադրված վարկեր: Այս վարկերի համար արժեզրկման պահուստ չի ստեղծվում գրավով ապահովվածության հիմքով:

Վարկի որակը ֆինանսական ակտիվների դասի համար

Ստորև ներկայացված ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է խմբի կողմից՝ հիմնվելով արտաքին վարկանիշների վրա: Չվարկանշված ազդեցությունները դասակարգվում են Ստանդարտ դասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արժեզրկված չեն:

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

31 դեկտեմբերի 2022թ.

Հազ. ՀՀ դրամ	Ծան.		Բարձր դաս	Ստանդարտ դաս	Ենթաստանդարտ դաս	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	5	Փուլ 1	897,726	65,820,809	-	66,718,535
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	8	Փուլ 1	-	50,917,404	-	50,917,404
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	9	Փուլ 2	-	-	169,536	169,536
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	9	Փուլ 1	-	21,285,791	-	21,285,791
Ընդամենը			897,726	138,024,004	169,536	139,091,266

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝
Հազ. ՀՀ դրամ

2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Բարձր դաս	Ստանդարտ դաս	Ընդամենը	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	5	Փուլ 1	1,322,505	77,534,883	78,857,388
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	8	Փուլ 1	-	19,675,099	19,675,099
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	9	Փուլ 1	-	180,897	180,897
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	9				
		Փուլ 1	-	21,002,202	21,002,202
Ընդամենը			1,322,505	118,393,081	119,715,586

Ստորև ներկայացված է խմբի դասակարգման համակարգի և գործընկերների արտաքին վարկանիշների համեմատությունը 2022թ. և 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

2022:

Արտաքին ռիջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ

	Ներքին վարկանիշի նկարագրությունը	PD
Aaa-ից A3	Բարձր դաս	0-0.05%
Baa1-ից B3	Ստանդարտ	0.2-3.2%
Caa1-ից Ca	Ենթաստանդարտ դաս	9.6%
C	Արժեզրկված	100%

2021:

Արտաքին ռիջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ

	Ներքին վարկանիշի նկարագրությունը	PD
Aaa-ից A3	Բարձր դաս	0-0.05%
Baa1-ից B3	Ստանդարտ	0.2-3.2%
Caa1-ից Ca	Ենթաստանդարտ դաս	9.7%
C	Արժեզրկված	100%

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը չի կարողանա սահմանված ժամկետներում կատարել իր վճարային պարտավորությունները՝ բնականոն և անկանխատեսելի պայմաններում: Այդ ռիսկի զսպման նպատակով դեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի, իրականացնում է ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Խումբը ունի բարձր իրացվելի և տարատեսակ ակտիվների պորտֆել, ինչը դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում հեշտությամբ կիրացվի:

Խումբը ունի նաև վարկային գծեր, ինչից այն կարող է օգտվել իրացվելիության կարիքների դեպքում: Բացի այդ, Խումբը ՀՀ ԿԲ-ում պահում է դրամային ավանդ (պարտադիր պահուստ), որի գումարը կախված է հաճախորդներից ներգրավված միջոցների ծավալից:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է Խմբի «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ դուստր ձեռնարկության կողմից՝ հիմնվելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության որոշակի գործակիցների վրա:

Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցներ, նոստրո հաշիվներ, Հայաստանի կառավարության կողմից թողարկված պարտքային արժեթղթեր և այլ կորպորատիվ պարտքային արժեթղթեր, որոնց համար առկա է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն կամ որոնց օգտագործումը որևէ կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ վճարման ենթակա պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ցանկացած այլ պարտավորություն, որը ենթակա է ցպահանջ վճարման:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ այս գործակիցները հետևյալն էին.

	Սահմանաչափ	2022, %	2021, %
Ն2.1-Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ)	Նվազագույնը 15%	20.51%	24.57%
Ն2.2-Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	Նվազագույնը 60%	72.5%	111.12%

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը ըստ պայմանագրային մարման ժամկետների

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ միևնույն մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չգեղջված պարտավորությունների հիման վրա: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ 31 դեկտեմբերի 2022թ.	Առևտրային ածանցյալ գործիքներ	Մինչև 3 ամիս	3 - 12 ամիս	1 - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	9,663,807	199,387	78,254	-	9,941,448
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	218,509,546	135,280,953	74,824,334	6,709,127	435,323,960
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	912,878	-	-	912,878
Ստորադաս վարկեր Այլ փոխառու միջոցներ, բացառությամբ վարձակալության	-	25,998	3,793,384	9,500,314	-	13,319,696
պարտավորությունների	-	3,772,330	22,689,277	69,664,264	3,503,205	99,629,076
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	13,358,184	1,030,440	-	-	14,388,624
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	-	245,329,865	163,906,319	154,067,166	10,212,332	573,515,682
Վարկային պարտավորություններ	-	54,545,377	-	-	-	54,545,377

Հազ. ՀՀ դրամ 31 դեկտեմբերի 2021թ.	Առևտրային ածանցյալ գործիքներ	Մինչև 3 ամիս	3 - 12 ամիս	1 - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	56,868	2,393	1,018,511	-	1,077,772
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	168,731,806	117,612,301	56,267,637	9,368,764	351,980,508
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	161,462	5,149,874	-	5,311,336
Ստորադաս վարկեր Այլ փոխառու միջոցներ, բացառությամբ վարձակալության	-	69,993	160,986	4,006,225	8,936,516	13,173,720
պարտավորությունների	-	6,858,823	18,851,464	78,085,351	8,851,432	112,647,070
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	5,814,552	-	2,513,921	-	8,328,473
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	-	181,532,042	136,788,606	147,041,519	27,156,712	492,518,879
Վարկային պարտավորություններ	-	43,032,229	-	-	-	43,032,229

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ի վարձակալության պարտավորությունների վերլուծությունը հետևյալն է.

	Մինչև 1 տարի	1 - 2 տարի	2- 3 տարի	3 -4 տարի	4 - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Հազ. ՀՀ դրամ Վարձակալության գծով պարտավորություններ	141,021	163,982	76,090	668,774	2,252	521,520	1,573,639

2021թ. դեկտեմբերի 31-ի վարձակալության պարտավորությունների վերլուծությունը հետևյալն է.

	Մինչև 1 տարի	1 - 2 տարի	2- 3 տարի	3 -4 տարի	4 - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Հազ. ՀՀ դրամ Վարձակալության գծով պարտավորություններ	554,767	597,767	422,961	335,081	115,908	64,712	2,091,196

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում ընթացիկ հաշիվների և կայունության նախորդ ժամանակաշրջանների տվյալները: Նրանց լուծարումը պատմականորեն տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան նշված է վերը նշված աղյուսակներում: Այս մնացորդները ներառված են վերը նշված աղյուսակներում երեք ամսից պակաս ժամկետում վճարման ենթակա գումարներում:

Վերոնշյալ աղյուսակում ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Հայաստանի օրենսդրությանը համապատասխան, Բանկը պարտավոր է ավանդատուի պահանջով մարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Այս ավանդները դասակարգված են վերը նշված աղյուսակում՝ ըստ իրենց սահմանված մարման ժամկետների:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների, ներառյալ արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքների և բաժնային գործիքների գների փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս ֆինանսական արդյունքների մասին հսկի համախմբված հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի հնարավոր հավանական փոփոխությունների նկատմամբ, բոլոր այլ փոփոխական մեծությունները հաստատուն լինելու դեպքում:

Շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվության զգայունությունը իրենից ներկայացնում է տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունների ազդեցությունը մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա, որը հաշվարկվել է դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նկատմամբ: Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով ֆիքսված տոկոսադրույքով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արժույթ	Ելակետերի աճ 2021թ. 2022թ.	2021 տոկոսային եկամտի զգայունությունը 2022թ.	Սեփական կապիտալի զգայունությունը 2022թ.
ՀՀ դրամ	1.50%	(26,444)	(26,444)
ԱՄՆ դոլար	1.25%	(93,328)	(93,328)

Արժույթ	Ելակետերի նվազում 2022թ.	2021 տոկոսային եկամտի զգայունությունը 2022թ.	Սեփական կապիտալի զգայունությունը 2022թ.
ՀՀ դրամ	1.50%	26,444	26,444
ԱՄՆ դոլար	1.25%	93,328	93,328

Արժույթ	Ելակետերի աճ 2021թ.	2021 տոկոսային եկամտի զգայունությունը 2021թ.	Սեփական կապիտալի զգայունությունը 2021թ.
ՀՀ դրամ	1.50%	(282,208)	(2,704)
ԱՄՆ դոլար	1.25%	(217,467)	(5,617)

Արժույթ	Ելակետերի նվազում 2021թ.	2021 տոկոսային եկամտի զգայունությունը 2021թ.	Սեփական կապիտալի զգայունությունը 2021թ.
ՀՀ դրամ	1.50%	282,208	2,704
ԱՄՆ դոլար	0.25%	43,493	1,123

Արժույթային ռիսկ

Արժույթային ռիսկն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է Տնօրինությունը սահմանել է արտարժույթային դիրքերի սահմանաչափեր՝ հիմնվելով ԿԲ կողմից սահմանված նորմատիվների վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով դեկտեմբերի 31-ի դրությամբ խումբը ունի Էական արժույթային դիրքեր դրամական ակտիվների և պարտավորությունների գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա, երբ այլ փոփոխական արժեքները հաստատուն են (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից): Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա ազդեցությունից: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը: Տնօրինությունը սահմանել է արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկի թույլատրելի ռիսկի սահմանաչափ:

Արժույթ	Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %	Ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա 2022թ.	Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն %	Ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա 2021թ.
ԱՄՆ դոլար	20.00%	(681,457)	20.00%	1,243,568
ԱՄՆ դոլար	(20.00%)	681,457	(20.00%)	(1,243,568)
Եվրո	8.50%	151,054	8.50%	(139,456)
Եվրո	(8.50%)	(151,054)	(8.50%)	139,456

Գլոբալ վերահսկող մարմինների կողմից IBOR-ը օգտագործումից հանելու և այն այլընտրանքային Էտալոնային դրույքներով փոխարինելու որոշման՝ խումբը մշակում է անցումային ծրագիր իր այն պայմանագրերի համար, որոնք ազդեցություն կկրեն դրույքի փոփոխությունից:

31 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Նախքան LIBOR-ի գործածումից դուրս գալը խումբը պայմանագրերում փոփոխություններ կանի՝ LIBOR-ը փոխարինելով այլընտրանքային Ետալոնային դրույքով, և դրա համապատասխան պայմանագրեր կստորագրի բոլոր վարկատուների հետ: Նույն դրույքը կկիրառվի նաև Բանկի կողմից հաճախորդներին տրամադրվող, լողացող տոկոսադրույքով ենթավարկերի համար:

IBOR բարեփոխումը ենթադրում է տարբեր ռիսկեր խմբի համար, որոնք կառավարվում և վերահսկվում են: Այդ ռիսկերը ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- IBOR բարեփոխումն իրականացնելուն ուղղված առկա պայմանագրերում փոփոխություններ կատարելուց բխող վարքագծային ռիսկ՝ հաճախորդների և գործընկերների գծով,
- IBOR բարեփոխման հետևանքով շուկաների անկայունության ֆինանսական ռիսկ, որին կարող են ենթարկվել խումբն ու իր հաճախորդների, և որը կբերի ֆինանսական կորուստներ
- Քննադատման ռիսկ՝ շուկայի վերաբերյալ տեղեկատվության հնարավոր բացակայության և IBOR իրացվելիության նվազման և Ետալոնային դրույքների դիտարկելի չլինելու դեպքում,
- SS համակարգերում և ընթացակարգերում փոփոխություններ կատարելուց ծագող գործառնական ռիսկ, ինչպես նաև վճարումների խափանման ռիսկ՝ IBOR-ի օգտագործումից դուրս գալու հետևանքով:

Ստորև բերված աղյուսակում ցույց է տրվում IBOR-ի նախատեսվող նշանակալից բարեփոխումների ազդեցությունը խմբի գործիքների արժեքի վրա տարեվերջի դրությամբ: Այս ռիսկը առկա է լինելու մինչև IBOR-ի՝ ապագայում օգտագործումից դուրս գալը և անցումը այլ դրույքի, օրինակ՝ աղյուսակում չի ներառվում այն ռիսկը, որ առկա է մինչև այլ դրույքի պարտադիր անցնելը.

<i>Հազ. ՀՀ դրամ</i> 31 դեկտեմբերի 2022թ.	Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեք	Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ՝ հաշվեկշռային արժեք	Ածանցյալ գործիքներ՝ անվանական արժեք
LIBOR ԱՄՆ դոլար (6 ամիս)	17,518,191	24,984,429	14,413,000
Պարտատոմս ՀՀ դրամ	10,695,685	12,458,599	-

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, ներքին գործընթացների անհամապատասխանության կամ ձախողման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Խումբը գործառնական ռիսկերի կառավարման շրջանակներում ընդունել է եռաստիճան պաշտպանության մեխանիզմ: Պաշտպանության առաջին աստիճանը ապահովում են հաճախորդների սպասարկման աշխատակազմը և գործառնական կառավարման խումբը, պաշտպանության երկրորդ աստիճանը ապահովվում է ռիսկերի կառավարման և համապատասխանության գործառնությունների կողմից, ներքին աուդիտի գործառնությունով ապահովվում է պաշտպանության երրորդ աստիճանը:

Գործառնական ռիսկերի կառավարման համակարգը ներառում է հետևյալ հիմնական ասպեկտները՝ ռիսկերի քարտեզագրում, միջադեպերի վերլուծություն և մշտական վերահսկողության գործառնություն: Ներքին վերահսկողության համակարգը ընդգրկում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում: Տնօրինությունը սահմանել է նաև գործառնական ռիսկի ռիսկի ախորժակի սահմանաչափ:

32 Իրական արժեքի չափումներ

Իրական արժեքի չափման գործընթաց

Խմբի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ներդրումային գույքի և շենքերի համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Արտաքին գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման համար, ինչպիսիք են հողը և շենքերը, փոխադրամիջոցները: Արտաքին գնահատողների ներգրավումը որոշվում է ղեկավարության կողմից: Ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են Նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Իրական արժեքի հիերարխիա

Խումբն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիան ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու և բացահայտելու համար:

- 1-ին մակարդակ – համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները, որոնք ունեն նշանակալի ազդեցություն իրական արժեքի գնահատման համար, ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. մոդելներ, որոնք օգտագործում են մոդելներ, որոնք ունեն նշանակալի ազդեցություն գրանցված իրական արժեքի վրա, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Իրական արժեքի բացահայտման Նպատակով Խումբը որոշել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվի կամ պարտավորության բնույթի, բնութագրերի և ռիսկերի և իրական արժեքի հիերարխիայի մակարդակի վրա, ինչպես նկարագրված է վերևում:

32 Իրական արժեքի չափումներ (շարունակություն)

	Իրական արժեքի չափում՝ օգտագործելով			
	Ակտիվ շուկայում գնանշվող գներ (Մակարդակ 1)	Էական դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 2)	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)	Ընդամենը
Հազ. ՀՀ դրամ				
31 դեկտեմբերի 2022թ.				
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	363,284	-	363,284
Բաժնային գործիքներ	2,153,118	-	-	2,153,118
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Պարտքային գործիքներ	-	21,285,791	-	21,285,791
Բաժնային գործիքներ	10,638	-	-	10,638
Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ	-	-	101,640	101,640
Ոչ ֆինանսական ակտիվներ				-
Հիմնական միջոցներ - հող և շենքեր, տրանսպորտային միջոցներ	-	-	12,824,138	12,824,138
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,703,944	66,665,341	-	88,369,285
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	24,453,149	26,353,081	50,806,230
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	-	-	90,340	90,340
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	-	53,423,221	53,423,221
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	1,529,376	1,529,376
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	406,318,797	406,318,797
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	179,310,388	244,601,936	423,912,324
Թողարկված պարտքային արժեթղթեր - ՀՀ պարտատոմսեր	-	6,206,060	-	6,206,060
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	6,444,304	3,493,330	9,937,634
Ստորադաս վարկեր	-	-	7,805,036	7,805,036
Այլ փոխառություններ	-	-	84,323,152	84,323,152
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	14,388,624	14,388,624

32 Իրական արժեքի չափումներ (շարունակություն)

	Իրական արժեքի չափում՝ օգտագործելով			
	Ակտիվ շուկայում գնանշվող գներ (Մակարդակ 1)	Էական դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 2)	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (Մակարդակ 3)	Ընդամենը
Հազ. ՀՀ դրամ				
31 դեկտեմբերի 2021թ.				
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
Առևտրային արժեթղթեր	-	433,697	-	433,697
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	38,625	-	38,625
Բաժնային գործիքներ	2,759,029	-	-	2,759,029
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Պարտքային գործիքներ	-	21,002,202	-	21,002,202
Զգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ	-	-	115,381	115,381
Ոչ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-
Հիմնական միջոցներ - հող և շենքեր, տրանսպորտային միջոցներ	-	-	11,551,067	11,551,067
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,723,893	78,724,095	-	96,447,988
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	13,157,635	6,461,448	19,619,083
Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	-	-	118,217	118,217
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	-	31,233,067	31,233,067
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	1,331,573	1,331,573
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	341,107,411	341,107,411
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	-	117,974,466	222,060,032	340,034,498
Թողարկված պարտքային արժեթղթեր - ՀՀ պարտատոմսեր	-	3,494,385	-	3,494,385
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	1,042,404	28,486	1,070,890
Ստորադաս վարկեր	-	-	9,794,000	9,794,000
Այլ փոխառություններ	-	-	93,347,410	93,347,410
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	8,328,473	8,328,473

Իրական արժեքով չհաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Ստորև բերված է Խմբի ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքների և իրական արժեքների համեմատությունն ըստ դասերի, որոնք իրական արժեքով չեն հաշվառվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Աղյուսակը չի ներառում ոչ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները:

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

34 Իրական արժեքի չափումներ (շարունակություն)

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Հաշվե- կշռային արժեք 2022թ.	Իրական արժեք 2022թ.	Զճանա- չված օգուտ/ (վնաս) 2022թ.	Հաշվե- կշռային արժեքը 2021թ.	Իրական արժեք 2021թ.	Զճանաչ- ված օգուտ/ (վնաս) 2021թ.
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	88,369,285	88,369,285	-	96,447,988	96,447,988	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	50,806,230	50,806,230	-	19,619,083	19,619,083	-
Ներդրումային արժեթղթեր - ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	90,340	90,340	-	118,217	118,217	-
Հաճախորդներին տրված վարկեր	406,318,797	405,374,629	(944,168)	340,528,365	340,330,883	(197,482)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	53,423,221	53,423,221	-	31,233,067	31,213,390	(19,677)
Այլ ֆինանսական ակտիվներ	1,529,376	1,529,376	-	1,331,573	1,331,573	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	423,912,324	423,912,324	-	336,550,246	340,034,498	(3,484,252)
Թողարկված պարտքային արժեթղթեր - ՀՀ պարտատուներ	6,206,060	6,206,060	-	3,461,498	3,494,385	(32,887)
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	9,937,634	9,937,634	-	1,070,890	1,070,890	-
Ստորադաս վարկեր	7,805,036	7,805,036	-	9,794,000	9,794,000	-
Այլ փոխառություններ	84,323,152	84,323,152	-	92,331,761	93,347,410	(1,015,649)
Այլ ֆինանսական պարտավորություններ	14,388,624	14,388,624	-	8,328,473	8,328,473	-
Ընդամենը իրական արժեքի չճանաչված փոփոխություն			(944,168)			(4,749,947)

Գնահատման մեթոդաբանություն և ենթադրություններ

Ստորև նկարագրված են այն մեթոդներն ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով արտացոլված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար, ինչպես նաև իրական արժեքով չարտացոլված այն հոդվածների իրական արժեքը որոշելու համար, որոնց իրական արժեքը բացահայտվում է:

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին

Բարձր իրացվելի կամ կարճաժամկետ մարման ժամկետով (երեք ամսից պակաս) ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համար ենթադրվում է, որ դրանց հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: Այս ենթադրությունը կիրառվում է նաև ցպահանջ ավանդների և անժամկետ խնայողական հաշիվների նկատմամբ:

Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Գույքի իրական արժեքը որոշվել է շուկայական համադրելի մեթոդի կիրառմամբ: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Սա նշանակում է, որ գնահատողի կողմից կատարված գնահատումները հիմնված են շուկայական գործարքների գների վրա՝ Էապես ճշգրտված՝ հաշվի առնելով կոնկրետ գույքի բնույթը, գտնվելու վայրը կամ վիճակը: Այդ ակտիվների իրական արժեքները գնահատվում են անկախ, մասնագիտական որակավորում ունեցող և անհրաժեշտ լիցենզիաների տիրապետող՝ գույքի գնահատողների կողմից իրականացված գնահատումների հիման վրա:

32 Իրական արժեքի չափումներ (շարունակություն)

Նշանակալից ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են ղեկավարության հետ սերտ խորհրդակցությամբ: Լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են ստորև:

Հող և շենքեր

Գրասենյակի հողերի և շենքերի իրական արժեքները գնահատվում են եկամտի և շուկայական մոտեցումներով: Եկամտի մոտեցումը կիրառվել է վարձակալությունից ստացված եկամտի գնահատված հոսքի կապիտալացմամբ՝ առանց կանխատեսվող գործառնական ծախսերի, օգտագործելով շուկայական եկամտաբերությունից բխող զեղչման դրույքաչափը, որը ենթադրվում է նմանատիպ անշարժ գույքի գծով վերջին գործարքներից: Երբ փաստացի վարձավճարը էականորեն տարբերվում է գնահատված վարձավճարներից, ճշգրտումներ են կատարվում վարձակալության գնահատված արժեքի նկատմամբ: Վարձակալված գույքից դրամական միջոցների ներհոսքը գնահատելիս հաշվի է առնվում զբաղվածության ներկա մակարդակը, առկա վարձակալության պայմանները և ապագա վարձակալություններից վարձակալական վճարների ակնկալիքները շենքերի տնտեսական մնացորդային տևողության ընթացքում:

Առավել նշանակալի ելակետային տվյալները, որոնցից որևէ մեկը դիտարկելի չէ, վարձակալության գնահատված արժեքն է, թափուրության մակարդակի և զեղչի դրույքաչափի վերաբերյալ ենթադրությունները: Գնահատված իրական արժեքը մեծանում է, եթե գնահատված վարձակալությունը մեծանում է, թափուրության մակարդակը նվազում է կամ եթե զեղչման տոկոսադրույքը (շուկայական եկամտաբերությունը) նվազում է: Ընդհանուր գնահատումները զգայուն են բոլոր երեք ենթադրությունների նկատմամբ: Ղեկավարությունը համարում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունների շրջանակը ամենամեծն է վարձակալության արժեքների և թափուրության մակարդակների համար, և որ կա նաև փոխկապակցվածություն այս տվյալների միջև:

Շուկայական մոտեցումն արտացոլում է նմանատիպ գույքի համար վերջին շուկայական գործարքների դիտարկելի գները և ներառում է գույքին բնորոշ գործակիցներով ճշգրտումներ՝ ներառյալ չափը, գտնվելու վայրը, շենքի շինարարական-ինժեներական առանձնահատկությունները, տեխնիկական (ֆիզիկական) վիճակը, ծանրաբեռնվածությունը և օգտագործման նպատակը:

Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներից է՝ ճշգրտումը գույքին բնորոշ գործակիցներով: Այս ճշգրտման չափն ու ուղղությունը կախված է նմանատիպ գույքի դիտարկելի շուկայական գործարքների քանակից և բնութագրերից, որոնք օգտագործվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ընդհանուր առմամբ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները էական ազդեցություն չեն ունենա գնահատման վրա:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք գնահատվում են օգտագործելով շուկայական ելակետային տվյալներ, հիմնականում տոկոսային և արժույթային սվոպեր են և արտարժույթային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման մեթոդները ներառում են ֆորվարդների գնորոշման և սվոպ մոդելներ՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկներ: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր ելակետային տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, արտարժույթի սիոթ և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Գնահատման մեթոդների և գնորոշման մոդելների միջոցով գնահատված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը հիմնականում բաղկացած են ՀՀ Կառավարության պարտատոմսերից: Այդ արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, ինչը ընդգրկում է շուկայի կողմից դիտարկելի և ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալներ:

33 Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ դրանց ակնկալվող վերականգնման կամ մարման ժամկետների:

Խմբի պայմանագրային չգեղջված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 31-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

	2022թ.			2021թ.		
	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	88,369,285	-	88,369,285	96,447,988	-	96,447,988
Առևտրային արժեթղթեր	-	-	-	433,697	-	433,697
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	36,273	327,011	363,284	2,404	36,221	38,625
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	25,255,153	25,551,077	50,806,230	4,941,291	14,677,792	19,619,083
Ներդրումային արժեթղթեր	6,472,071	17,169,456	23,641,527	3,936,354	20,058,475	23,994,829
Հաճախորդներին տրված վարկեր	125,673,430	280,645,367	406,318,797	38,365,956	302,162,409	340,528,365
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	13,192,596	40,230,625	53,423,221	13,587,107	17,645,960	31,233,067
Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում	-	1,362,224	1,362,224	-	1,218,677	1,218,677
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	28,948,668	28,948,668	-	23,729,559	23,729,559
Այլ ակտիվներ	13,199,506	2,915,374	16,114,880	8,954,008	1,773,090	10,727,098
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	91,722	91,722
Ընդամենը	272,198,314	397,149,802	669,348,116	166,668,805	381,393,905	548,062,710

	2022թ.			2021թ.		
	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը	Մինչև մեկ տարի	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>						
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	9,863,194	74,440	9,937,634	199,906	870,984	1,070,890
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	347,520,218	76,392,106	423,912,324	278,131,179	58,419,067	336,550,246
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,023,967	2,182,093	6,206,060	-	5,068,908	5,068,908
Այլ փոխառություններ	23,311,073	61,012,079	84,323,152	17,834,751	74,497,010	92,331,761
Ստորադաս վարկեր	89,389	7,715,647	7,805,036	-	9,794,000	9,794,000
Ընթացիկ հարկային պարտավորություններ	4,698,987	-	4,698,987	1,187,740	-	1,187,740
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	1,016,530	1,016,530	-	1,296,678	1,296,678
Այլ պարտավորություններ	18,427,939	-	18,427,939	11,018,754	1,997,745	13,016,499
Ընդամենը	407,934,767	148,392,895	556,327,662	308,372,330	151,944,392	460,316,722
Զուտ	(135,736,453)	248,756,907	113,020,454	(141,703,525)	229,449,513	87,745,988

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների կայունության նախորդ ժամանակաշրջանների տվյալները: Նրանց լուծարումը պատմականորեն տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան նշված է վերը նշված աղյուսակներում: Այս մնացորդները վերը նշված աղյուսակներում ներառված են Մինչև մեկ տարի սյունակում:

Համաձայն Հայաստանի օրենսդրության, Խումբը պարտավոր է ավանդները մարել ավանդատուի պահանջով: Տես Ծանոթագրություն 17:

34 Կապակցված կողմերի բացահայտումներ

Համաձայն «Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՄՍ 24-ի, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու կամ ֆինանսական կամ գործառնական որոշումներ կայացնելիս զգալի ազդեցություն գործադրելու կարողություն: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքների մեջ մտնել, որոնք չեն իրականացվի ոչ կապակցված կողմերի միջև, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել ոչ կապակցված կողմերի հետ գործարքների գներից և պայմաններից:

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
	Առանցքային ղեկավար անձնակազմ և Նրանց ընտանիքի մերձավոր անդամներ	Առանցքային ղեկավար անձնակազմ և Նրանց ընտանիքի մերձավոր անդամներ
Համախառն չմարված վարկեր՝ հունվարի 1-ի դրությամբ	346,064	400,678
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	1,283,469	231,933
Տարվա ընթացքում մարված վարկեր	(658,991)	(284,431)
Այլ փոփոխություններ	1,043	(2,116)
Դեկտեմբերի 31-ին չմարված վարկեր, համախառն	971,585	346,064
Հանած՝ արժեզրկման գծով պահուստը առ 31 դեկտեմբերի	(2,657)	(2,205)
Դեկտեմբերի 31-ին չմարված վարկեր, զուտ	968,928	343,859
Վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը	5.1%	5.4%
Ընթացիկ հաշիվներ և ավանդներ առ 1 հունվարի	894,529	1,545,556
Տարվա ընթացքում ներգրավված ընթացիկ հաշիվներ և ավանդներ	4,389,706	1,351,459
Տարվա ընթացքում մարված ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(3,750,199)	(2,002,486)
Այլ փոփոխություններ	13,469	-
Ընթացիկ հաշիվներ և ավանդներ առ 31 դեկտեմբերի	1,547,505	894,529

Կապակցված կողմերի գործարքներից առաջացող եկամուտներն ու ծախսերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 2022թ. Առանցքային ղեկավար անձնակազմ և Նրանց ընտանիքի մերձավոր անդամներ	2021թ. Առանցքային ղեկավար անձնակազմ և Նրանց ընտանիքի մերձավոր անդամներ
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	46,223	12,467
Տոկոսային ծախս ավանդների գծով	117,999	99,945

Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Աշխատավարձեր և այլ կարճաժամկետ օգուտներ	2,612,963	1,623,490
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ	1,140,099	1,576,855
Ընդամենը հատուցում՝ առանցքային ղեկավար անձնակազմին	3,753,062	3,200,345

35 Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում

Խումբն ունի բաժնեմաս «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ում, որտեղ Խմբին է պատկանում բաժնետոմսերի 49%-ը (31 դեկտեմբերի 2021թ.՝ 49%): Ասոցիացված կազմակերպությունը հիմնադրվել է 2013թ.-ին և կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Ասոցիացված կազմակերպության հիմնական գործունեությունը պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է: Ասոցիացված կազմակերպության գործունեությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը կազմել է 1,362,224 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 1,218,677 հազ. ՀՀ դրամ):

Ստորև ներկայացված է Էական ասոցիացված կազմակերպությունների ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,649	282,054
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,624,416	872,939
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումներ	1,321,606	1,430,007
Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	135,141	35,506
Հետաձգված հարկային ակտիվ	9,086	7,042
Այլ ակտիվներ	301,408	245,761
Ընդամենը ակտիվներ	3,416,306	2,873,309
Պարտավորություններ		
Ընթացիկ հարկային պարտավորություն	296,100	221,910
Այլ պարտավորություններ	340,157	162,008
Ընդամենը պարտավորություններ	636,257	383,918
Զուտ ակտիվներ	2,780,049	2,489,391
Խմբի մասնաբաժինը զուտ ակտիվներում	1,362,224	1,218,677

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Միջնորդավճարների գծով եկամուտ	2,906,850	2,378,922
Տոկոսային և համանման եկամուտ	92,664	56,040
Եկամուտ ֆինանսական խորհրդատվությունից	20,246	13,023
Այլ եկամուտ	1,707	1,515
Զուտ վնաս արտարժույթային գործարքներից	(12,990)	(800)
Ֆինանսական ծախս	(16,068)	-
Անձնակազմի գծով ծախսեր	(187,793)	(126,119)
Վարչական և այլ ծախսեր	(950,410)	(872,181)
Շահույթ Նախքան հարկումը	1,854,206	1,450,400
Շահութահարկի գծով ծախս	(353,503)	(268,718)
Տարվա շահույթ	1,500,703	1,181,682
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Հետագայում շահույթում կամ վնասում չվերադասակարգվող հոդվածներ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների գծով չիրացված օգուտ	(108,401)	42,216
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց հարկի	(108,401)	42,216
Ընդհանուր համապարփակ եկամուտ տարվա համար	1,392,302	1,223,898

Խմբի բաժնեմասը ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում և այլ համապարփակ եկամուտում հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հաշվետու տարվա շահույթ	736,475	579,024
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	(53,122)	20,686
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	683,353	599,710

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ասոցիացված կազմակերպությունների՝ շահաբաժինների տեսքով դրամական միջոցները Խմբին փոխանցելու կարողության Էական սահմանափակումներ չեն եղել: Խումբը 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ստացել է 539,806 հազ. ՀՀ դրամի շահաբաժիններ (2021 թ.՝ 365,475 հազ. ՀՀ դրամ):

36 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների փոփոխություններ

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Թողարկված պարտքային արժեթղթեր	Այլ փոխառու- լություններ	Ստորադաս վարկեր	Ընդամենը պարտավորու- լություններ ֆինանսա- վորման գործունեու- լությունից
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2020թ.	18, 19, 20	8,500,960	101,043,374	11,130,839	120,675,173
Թողարկումից մուտքեր		3,461,498	33,778,000	-	37,239,498
Մարում		(6,095,477)	(43,034,045)	-	(49,129,522)
Անկանխիկ գործարքներ Արտարժույթի վերահաշվարկ		(780,329)	(2,095,668)	(1,227,040)	(4,103,037)
Վարձակալության պարտավորություններ (ՖՀՄՍ 16)		-	1,531,839	-	1,531,839
Այլ		(17,744)	1,108,261	(109,799)	980,718
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2021թ.	18, 19, 20	5,068,908	92,331,761	9,794,000	107,194,669
Թողարկումից մուտքեր		2,191,500	34,288,004	-	36,479,504
Մարում		(789,212)	(37,932,197)	-	(38,721,409)
Անկանխիկ գործարքներ Արտարժույթի վերահաշվարկ		(265,302)	(5,052,890)	(1,968,650)	(7,286,842)
Վարձակալության պարտավորություններ (ՖՀՄՍ 16)		-	503,590	-	503,590
Այլ		166	184,884	(20,314)	164,736
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2022թ.	18, 19, 20	6,206,060	84,323,152	7,805,036	98,334,248

«Այլ» տողը ներառում է հաշվեգրված, բայց դեռ չվճարված տոկոսների ազդեցությունը թողարկված պարտքային արժեթղթերի, այլ փոխառու միջոցների և ստորադաս վարկերի վրա: Խումբը դասակարգում է վճարված տոկոսագումարները որպես գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

37 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ֆինանսական գործիքները հետևյալն են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Ֆինանսական ակտիվների/պարտավորությունների տեսակները	Համախառն գումարները մինչև հաշվանցումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Հաշվանցված համախառն գումարներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Չուտ գումարը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա գումարներ՝ չհաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում		
				Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական միջոցների գրավ	Չուտ ազդեցության չափը
				Հազ. ՀՀ դրամ		
ԱԿՏԻՎՆԵՐ						
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Տոկոսադրույքի սվոփ	333,748	(6,737)	327,011	327,011	-	-
Արտարժույթի սվոփ	36,273	-	36,273	36,273	-	-
Ներդրումային արժեթղթեր						
- առուվաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված բանկերում տեղաբաշխված միջոցներ	6,019,389	-	6,019,389	6,019,389	-	-
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր այլ բանկերի հետ	559,459	-	559,459	559,459	-	-
Հաճախորդներին տրված վարկեր						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	1,956,613	-	1,956,613	1,956,613	-	-
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ակտիվներ	8,905,482	(6,737)	8,898,745	8,898,745	-	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Բանկերում տեղաբաշխված միջոցներ						
Վաճառքի և հետգնման պայմանագրեր այլ բանկերի հետ	(6,026,642)	-	(6,026,642)	(6,026,642)	-	-
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա պարտավորություններ	(6,026,642)	-	(6,026,642)	(6,026,642)	-	-

«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.

37 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում (շարունակություն)

Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ֆինանսական գործիքները հետևյալն են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Ֆինանսական ակտիվների /պարտավորությունների տեսակները	Համախառն գումարները մինչև հաշվանցումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված համախառն գումարներ	Չուտ գումարը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցումից հետո	Հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա գումարներ՝ չհաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում		Չուտ ազդեցության չափը
				Ստացված դրամական միջոցների գրավ		
				Ֆինանսական և գործիքներ		
Հազ. ՀՀ դրամ						
ԱԿՏԻՎՆԵՐ						
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Տոկոսադրույքի սվոփ	36,221	-	36,221	36,221	-	-
Արտարժույթի սվոփ	3,837	(1,433)	2,404	2,404	-	-
Հաճախորդներին տրված վարկեր						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	3,054,526	-	3,054,526	3,054,526	-	-
Ընդամենը հիմնական հաշվանցման և համանման պայմանագրերի ներքո հաշվանցման ենթակա ակտիվներ	3,094,584	(1,433)	3,093,151	3,093,151	-	-

38 Կապիտալի համարժեքություն

Խուժբը կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ ապահովել իմբի կապիտալի համարժեքությունը վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և իմբի կայուն վարկային վարկանիշի և ուժեղ կապիտալի ցուցանիշների պահպանումը՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խուժբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումներ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խուժբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

Հայաստանի Կենտրոնական բանկը սահմանում և վերահսկում է Բանկի կապիտալի նկատմամբ պահանջները:

Խմբի «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի դուստր ձեռնարկությունը որպես կապիտալ է սահմանում այն հոդվածները, որոնք կանոնակարգով սահմանված են որպես կապիտալ վարկային կազմակերպությունների համար: ՀՀ ԿԲ-ի՝ կապիտալի նկատմամբ պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի դրույթների վրա, Բանկի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (նորմատիվային կապիտալի գործակից) պետք է գերազանցի սահմանված նվազագույն մակարդակը: 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս նվազագույն մակարդակը կազմում էր 12%: «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահպանում է կանոնադրական կապիտալի գործակիցի գծով պահանջը:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կապիտալի համարժեքության նորմատիվը, որը հաշվարկվել է 1988թ. Բազելյան համաձայնագրի դրույթների համաձայն՝ հաշվի առնելով շուկայական ռիսկը ընդգրկելու գծով հետագա փոփոխությունները, կազմել է՝

38 Կապիտալի համարժեքություն (շարունակություն)

	2022թ. (չաուդիտ չանցած)	2021թ. (չաուդիտ չանցած)
<i>Հազ. ՀՀ դրամ</i>		
1-ին դասի կապիտալ	91,866,748	74,007,160
2-րդ դասի կապիտալ	11,744,252	15,934,557
Ընդամենը կապիտալ	103,611,000	89,941,717
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	610,690,247	507,923,050
Ընդամենը կապիտալ՝ արտահայտված որպես ռիսկով կշռված ակտիվների տոկոս (ընդհանուր կապիտալի ցուցանիշ)	16.97%	17.71%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի՝ առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

39 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չի ունեցել որևէ էական իրադարձություն, որը պետք է բացահայտվի այս հաշվետվության մեջ: